

1308

891.99
u-94



ԳԱՔՐԻԷԼ ՍՈՒՆԴՆԻՅԱՆՑ

# ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽԶԱ

ԿԱՏԱԿ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

ԳՈՒՂԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 3.

1908

391.99

Ս-94

-6 NOV 2011

891.99  
U-94

6

# ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽԶԱ

ԿԱՏԱԿ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ՀԵՂԻՆ ԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՐԲԻԷԼ ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՑԻ

1007  
32376

Թ Ի Ֆ Լ Ի Զ

ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆԱՑԱԿԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒՀԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 3.

1908

08. 2013  
MOS 1517

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՅ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ

ԹԱԼԱԼ, 30 տարեկան: Առաջին արարուածում սգի տեղական հագուստով. իսկ երկրորդ արարուածում՝ դարձեալ տեղական, բայց ամենաչքեղ բաց-կապոյտ դէրիայով, վրացնակ գլխով, ոսկէկար ճակտի աղլուխով, ծաղկէ կարմիր դօշ ու գօտկով և զանազան ակնեղէններով զարդարուած:

ԿԱՏԱՐԻՆԷ, 55 տարեկան. նոյնպէս սգի տեղական հագուստով:

ԷԼԻՍԱՅԷԹ, 45 տարեկան: Տեղական մուգ հագուստով, առաջին արարուածում՝ հասարակ, երկրորդում՝ զարդի:

ՄԱԹՕ, 60 տարեկան: Տեղական մուգ հագուստով և Քիրմանի շալէ գօտկով:

Կատարինէն գործ է անում՝ սպիտակ դաթիրայ, իսկ միւս կանայք — իրանց գերերին համապատասխան սև վերարկու, ինչպէս նշանակած է իրանց տեղերում:

ՍԱՆՎԷԼ, 30 տարեկան: Տեղական հագուստով: Գլխարկը՝ սև ֆուրածկայ:

ՕՀԱՆԷՄ, 55 տարեկան: Նոյնպէս տեղական հագուստով: Գլխարկը՝ Բուխարու սև գգակ:

ԱԻԵՏԻՔ, 45 տարեկան: Եւրոպական հագուստով: Գլխարկը՝ սև շլեապայ:

Երկուսն էլ ամբողջ ժամանակ գլխարաց են:

ԱՂԱՂՕ, 60 տարեկան: Կարմիր թշեր, ոլորած բեխեր, հաստ յծնքեր, սև ներկած մազեր: Սա էլ եւրոպական հագուստով է, բայց պարտադիր են սպիտակ շապիկ, գունաւոր փողպատ, նոյնպիսի ժիլէտ և պանտալօն, սև սերթուկ և գլխարկ—ցիլինդր. բոլորը նուրբ ճաշակի: Գործ է ածում գունաւոր մետաքսէ թաշկինակ, ոսկէ ժամացոյց ոսկէ շղթայով և ձոցի մէջ արծաթէ փօրթսիգար: Պատշգամբի վրայ (երկրորդ արարուածում)՝ վերարկուով, ձեռնափայտով և գլխարկով է:

ԵՐԿՈՒ ԾԱՌԱՅ, մինը՝ շքեղ շէքքէզկայով, արծաթէ քամարով և արծաթապատ դաշոյնով. միւսը՝ սև Փրակով և սպիտակ փողպատով, ժիլէտով ու ձեռնոցներով: Երկուսն էլ առանց գլխարկի են:

ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ, տեղական զարդի հագուստներով:

«Համբ» խոտանգոր Քաւ  
Խոտէ յարգուեալ  
Սաւաթուրեան

### ԲԵՂՆԸՍԻ ԲՕԽԶԸ

Կ Ա Տ Ա Կ

Առաջին անգամ ներկայացրած է Թիֆլիզի Արտիստական Թատրոնում 1907 թ. Նոյեմբերի 8-ին:

ԳՍԲՐԻԷԼ ՍՈՒՆԳՈՒԿԵԱՆՅԻ

Թ Ա Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Ա Ն Ե Ն Ե Ր Ը

ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԷՐ Է, կասակ մէկ արարուածով:

ԽԱԹԱԲԱԼԱ, կասակերգութիւն չորս արարուածով:

ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ, կասակ մէկ արարուածով:

ԵՒԱՅԻՆ կամ ՆՈՐ ԳԻՈԳԻՆԷՍ, կասակ երկու արարուածով:

ԷԼԻ ՄԷԿ ԶՈՉ, կասակերգութիւն երեք արարուածով:

ՊԷՊՕ, կասակերգութիւն երեք արարուածով:

ՔԱՆԳԱԾ ՕԶԱԽ, կասակերգութիւն երեք արարուածով:

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ, կասակերգութիւն չորս արարուածով:

ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽԶՍ, կասակ երկու արարուածով:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԵՐԷՆԻՑ

ԺՕՐԺ ԳԱՆԳԷՆ, կասակերգութիւն երեք արարուածով, հեղինակութիւն ՄՕԼԻԷՐԻ:

Այս գրուածքը, որին ես կատակ անունն եմ տուել, իսկապէս մի դառն երգիծաբանութիւն է, Թիֆլիզի կեանքից առնուած: Սա իմ «Պէպօ» կատակերգութեան յառաջաբանը, նրա նախերգանքն է, ուր Աղալօի և Թալալի դիմակի տակ մանրամասնօրէն նկարագրուած է, թէ ինչպէս գտան միմեանց և ամուսնացան «Պէպօ»-ի Զիմզիմովն ու նրա ընտրած ու սիրած էփէմիան:

Գ. Ս.

# ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽԶԱ

ԿՍՏԱԿ ԵՐԿՈՒ ԸՐԸՐՈՒԱԾՈՎ

Թիֆլիզի թատրոն, 1907 թ. Նոյեմբերի 8-ին:

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ԹԱԼԱ, գեղեցիկ մատաղահաս սրբեայրի . . . . . Տ. ՄԷԼԻՔԵԱՆ
- ԿԱՏԱՐԻՆԷ, Թալալի սկեսուրը, հասակաւոր սրբեայրի . . . . . Տ. ՅԱՄՄԻԿ
- ՍԱՆՎԷԼ, Թալալի տեղը, անգործ չքաւոր երիտասարդ . . . . . Պ. ՄԱՄԿՈՆԵԱՆ
- ԷԼԻՍԱՐԷԴ, Թալալի մայրը . . . . . Տ. ՆՈՆԻԿԵԱՆ
- ՕՋԱՆԷՍ, Թալալի հայրը, անանկացած արհեստաւոր . . . . . Պ. ՄԻՐՉՈՅԵԱՆ
- ԱԻԵՏԻՔ, սրանց ազգական, գործիչ յետ բաշուած վաճառական . . . . . Պ. ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆ
- ՄԱԹՕ, մօցիքուլ (միջնորդ) . . . . . Տ. ՎԱՐԴՈՒՀԻ
- ԱՂԱԼՕ, տարեքաւոր այրի, հարուստ վաճառական . . . . . Պ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ

Սազանդարներ և ծառաներ: Երգեր և պարեր:

Առաջին արարուածը կատարւում է Թալալի մարդանց տանը, իսկ երկրորդը — նրա հօրանց տանը:

Անցքը սլասանում է Թիֆլիզում անցեալ դարում:

# ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽԶԱՅ<sup>\*)</sup>

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է Թալալի մարդանց տանը մի հասարակ սենեակ երկու դռնով՝ ձախ կողմը և զիմացը՝ Աջ\*\*) կողմը՝ տախտ, գորգով և մութաքաներով զարդարած, իսկ ձախ կողմը հայելի և բազմոց սովորական սեղանով ու բազկաթոռներով: Դիմացը, երկու դռան մէջ՝ հեշտաբան [ commode ]: Ուր հարկն է՝ արթոններ: Երեկոյ է:

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԱՏԱՐԻՆԷ, տախտի վրայ ծալապատիկ նստած, գուլպայ է գործում, ԹԱԼԱԼ, բազմոցի վրայ նստած, չիքիլայ է կարում: Երկուսն էլ սղի հագուստով են:

## ԿԱՏԱՐԻՆԷ

Ի՞նչ էլաւ քիզ, հարսի, քանի լաց ըլիս... Իմ

\*) Բազանիքի բօխչայ. Թիֆլիզի ոճով փոխաբերաբար նշանակում է՝ խայտառակ գործերի ժողովածու:

\*\*) Բեմական ցուցումներում՝ աջ, ձախ — պէտք է ընդունել միշտ հանդիսականների շրջից նայելով:

դարդն էլ է ինձ հերիք. էլ ցաւիս վրայ ցաւ մի ա-  
ւելցնի, է, օխնած հորի:

ԹԱԼԱԼ, աչքերը սրբելով:

Ի՛նչ անիմ, բատօնօ ջան. ինչ ինձ բան էկաւ, իմ  
դուշմնին էլ չգայ:

Շարունակում է աչքերը սրբել:

ԿԱՏԱՐԻՆԷ

Բանը ինձ էկաւ, վուրթի, քիղ ի՛նչ էկաւ: Քունը  
թէ մարթն էր էն ջրատարը, իմը վուրթի էր: (Ձայնը  
երկարացնելով:) Իմ դարդիմանդ Միխակս: (Երկու ձե-  
ռով ծնկանը խփելով:) Մեռնի քու դէգէն, վուրթի-  
խուղի տակը փթում իս... Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...  
սիրտս փօթօթի է գալի:

ԹԱԼԱԼ

Աբան, ասում իս, բատօնօ. իմ սիրտն էլ էտէնց  
փօթօթի է ըլում, վուր էսէնց լացատրաք իմ ը-  
լում, է:

ԿԱՏԱՐԻՆԷ

Ի՛հ, վուրթի, շատ քիպէսնիրն ին էլի, ամա մէ  
էրկու տարի չին անց կացրի, նուր մէկանց մարթու  
ին գնացի:

ԹԱԼԱԼ

էն օրը մահ ըլի իմ գլխին... 'ես\*) գանա մար-  
թու էրես պիտի տեհնիմ, էլի՛... Իմ մարթը սիւ

\*) Ե տառը մակակէտով նշանակած ('ե) պէտք է ար-  
տասանել իսկ և իսկ այնպէս, ինչպէս արտասանվում է յի  
վանկը բառի միջում կամ վերջում, ձայնաւորից յետոյ.  
օրինակ՝ Մա յիս, Գա յի անէ, երկնա յիս, Եսա յի և այլն:

խուզն է յօրէսի դէնը... Ո՛ւր է, մէ վախտի հորիս  
տամ ու գնամ իմ մարթու մօղ պառկիմ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Մի ասի, վուրթի, մի ասի, ջեր\*) ջէհէլ իս.  
էսօր է, թէ էքուց, մէ ջէհէլ, սիրուն տղայ կու լուս  
ննգնի, կու մտնի դամարըդ ու դիփ մէտի քամու  
կու տաս:

ԹԱԼԱԼ

Վա՛յ, խուզն ըլի իմ գլխին:

ԿԱՏԱՐԻՆԷ, ձայնը երկարացնելով:

Իմ փա՛շա ու դրօ՛շա Միխակ ջան, վուր տուն գու  
քէիք, տունը վուտիտ տակը գմղմում էր, (լալով):  
հը՛, հը՛, հը՛, հը՛...

ԹԱԼԱԼ, բարձրաձայն հեկեկալով:

Ըօ՛, հօ՛, հօ՛, հօ՛... Եմբար նրա նման էլի օմբին  
կու՛լի աշխրբումը՛:

ԿԱՏԱՐԻՆԷ

է՛տ ասա, էտ ասա, վուրթի... Աստուձ խուզե-  
ցաւ իմ գլխին, տուն ու ախոս դիփ մէտի բրիշակ  
էլաւ:

ԹԱԼԱԼ

Սիվնայ իմ օրը, վուր էլ աշխրբի էրես շտես-  
նիմ 'ես:

ԿԱՏԱՐԻՆԷ, սգալով:

Միխակ ջան, Միխակ ջան... քու օլըրած բիխե-  
րուն մեռնի դէգէն:

ԹԱԼԱԼ, լալով:

Ը՛հ, հը՛, հը՛...

\*) Ջեր—գեռ. ջեր—անգամ:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՐԱՆՔ, ԷԼԻՍԱԲԷԴ

ԷԼԻՍԱԲԷԴ, վերարկուով, մտնում է դիմացի դռնից:  
Բարի իրիգուն ձիգ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Աստձու բարին, խնամի ջան, համեցէք:  
ԷԼԻՍԱԲԷԴ, վերարկուն վերցնելով եւ ձգելով մուտքի մօտ  
դրած աթոռի թիկունքի վրայ, դիմում է Թալալին:

Ի՞նչ էլաւ քիզ, վուրթի, փէշակ իս շինի քիզ հա-  
մա... Մէ օր չէկայ, վուր քիզ էտէնց շտեանիմ. լացի  
գուզա իս, թէ ինչ է... (Կատարինէին:) Ինչի՞ չիս  
խրատում, բատօնօ ջան. ախար միխկը չէ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Ջրատարի հորին գիղենայ, (Մի կողմ նայելով):  
սխմնայ քու գէղի օրը, վունցսր վուր սիւլցաւ, վուրթի,  
(Եւրասթէրին:) էս սահաթիս հէնց էտ էի խրատում.  
ամա սրա անգճումը վունչըչէն վունչիչ չէ աուն գը-  
նում: Էրանի էն օրը հավարնար չէիր դուս տարի ու  
խղճի գերեզմանը նուր-մէկանց չէիր շանց տլի սրան.  
էնդումէն դէսը էլ աճկը չէ ցամքեցրի:

ԷԼԻՍԱԲԷԴ, հրելով Թալալի ուսը:

Հերիք է, քա:

Նստում է բազմոցի մօտ դրած բազկաթոռի վրայ:

ԹԱԼԱԼ

Հիշտ հիշտ ասում իս, գէղի ջան. էրանի չէր ըլի,  
խսկի էլ մարթու չէիր տլի ինձ էստու համա:

ԷԼԻՍԱԲԷԴ

Մարթ ցաւի գայ ու սիւ սատանի քու գէղէն,  
վուրթի: Առչինը չիս դուն ու վիրչինը. աշխարքն  
էտէնց էկիլ է, էտէնց էլ կ'էհայ: Ինչոր շատին, էն  
էլ միզ: Քիչ վուփեվէրիք կան աշխարքումը՝ մէկն էլ  
դուն իս. ինչ անինք, վուրթի, Աստձու կամքն է:

ԿԱՏԱՐԻՆԷ

Օխնըվի նրա դարգահը, դաղից միզ ու դաղ-  
ղըղանի էրի:

ԹԱԼԱԼ, մօրը:

Ա՛խ, գէղի ջան, եարար 'ես վո՞նց իմ ապրում ու  
չունչ քաշում:

ԷԼԻՍԱԲԷԴ

Լաւ է, հէնց ապրիս. քու գլուխ չունիմ... Վիկաց,  
հանդրվի... (Կատարինէին:) Սրան ուզում իմ բաղնիս  
տանիմ, բատօնօ. դաստուր կու տան:

ԿԱՏԱՐԻՆԷ

Ինչի՞ չէ, խնամի ջան: (Թալալին:) Վիկաց, վուր-  
թի, վիկաց:

ԷԼԻՍԱԲԷԴ

Վիկաց, էլի, բօխչէս կապէ. չիս իմանում:

ԹԱԼԱԼ, մօրը:

Էրնէկ գիղենամ ըմղրօս բաղնիս է, գէղի... 'ես  
պիտի սիւ գերեզմանը գնամ, ըմ մէքաղնիսէքա:

ԷԼԻՍԱԲԷԴ, Թալալին, ցածր:

Վիկաց, քա, ճարկարած, է. (Աւելի ցածր:) յօ-  
րէս գու քայ... (Թալալը, առանձին, ուրախանում է:)  
Քիզ իմ ասում... (Կատարինէին:) Մէ հրամաէ, է,  
բատօնօ ջան:

ԿԱՏԱՐԻՆԷ, ԹԱԼԱԼԻՆ:

Հն ու չէ, չիս իմանում, քան վիկաց, էլի:

ԹԱԼԱԼ, ուրախութիւնը զսպելով, դիմում է մօրը:

Մախլաս, ինչ ուզում իք, անում իք ինձ, էլի:

Վեր է կենում եւ գրպանից հանելով մի բանալի, դնում բաց է անում հեշտոդարանի երկրորդ ձոցը [tiroir]:

ԿԱՏԱՐԻՆԷ, վեր կենալով:

Գնամ, ֆաէտօն ասիմ ձիդ համա:

ԷԼԻՍԱԲԷԴ, ոտի կանգնելով:

Հրամանքդ սուր իս նիդանում, գէթաղլա\*):

ԿԱՏԱՐԻՆԷ

Ձիդ համա վուր մէ քիչ նիդանամ էլ, ինամի ջան, ինչ հաջաթ, թէ չէ՝ ինչ նիդուլթին է:

Դուրս է գնում ձախ դռնից:

ՏԵՍԻԼ Գ

ԷԼԻՍԱԲԷԴ, ԹԱԼԱԼ

ԷԼԻՍԱԲԷԴ

Դէ, չնւտ արա, քօծ, չնւտ. էլ մի ուշացնի:

ԹԱԼԱԼ, նայելով դէպի ձախ դուռը, յանկարծ մօտ է վա-

զում էլիսաբէդին:

Ղսւրթ իս ասում, դէդի ջան:

ԷԼԻՍԱԲԷԴ

Վնոյ իմ ապրելուն, բաս սնւտ իմ ասում: Դուն գնան, բանդ տիս, 'ես էստի ղարաուլուլթին\*) կ'օնիմ:

Կանգնում է ձախու դռան մօտ:

\*) Ղ տառը թաւով նշանակած (ղ) պէտք է արտասա-

ԹԱԼԱԼ

Իժում, դիվ հագիր է:

ԷԼԻՍԱԲԷԴ

Դիվ, դիվ. դիվ մէտի սարքած է ու կարքած. քիզ ինք մնում... Հէստի օթախ ունինք հիմի գուրած ու զարթարած, վուր քէփդ գու քայ, քու արիւր. կ'օսիս՝ շահագդի լայիզ է գրուստ:

ԹԱԼԱԼ

Ձիւ մէ չպրծայ էս տանէմէն... (Վազում է դէպի հեշտոդարանը, բոխչան լցնում է գունաւոր շալերով եւ հագուստներով [ի միջի այլոց բաց-կապոյտ դէրիայ]: Յետոյ բանալով եւ դուրս քաշելով վերեւի ձոցը, հանում է միջից զանազան տուփեր ակնեղէններով, դնում է գրպանը եւ միքանի հատ էլ բերում տալիս է էլիսաբէդին:)

ԷԼԻՍԱԲԷԴ, առնելով տուփերը եւ գրպանը դնելով:

Բի, բի, վուրթի: Տիս թէ էլի իմքին կայ, բի. 'ես մինձ ջիբ ունիմ:

ԹԱԼԱԼ

Մնամ վուր դիվ վիկալայ: (Գարծեալ մօտենում է հեշտոդարանին ու բրբրելով ձոցները:)

Ձէ, չէ, էլ վունչիչ չկայ. մնացածը իս տուն տարանք էն օրը... (Կրկին գտնելով միքանի մանր իրեղէններ:)

Հն, յօրէս. կինաղամ մտէս էր ննգնում... (Բերում տալիս է մօրը:)

էս էլ, էս էլ, դէդի, էստունք էլ իմն է:

ԷԼԻՍԱԲԷԴ, առնելով իրեղէնները:

Լնւ, լնւ... (Գրպանում պահելով:)

Գնան, կամօզդ

նել որպէս Պարսից կամ Թուրքաց ق کամ Վրացոց ց:

կանքի բի, վունչիչ մաշուր չանին... (Թալալը շտապով գնում է, հեշտոդարանը կարգի է բերում:) Պրծի... (Բօխչան վերցնելով:) Էսդագա էլ բազնըսի բօխչա կուլի... (Տանում դնում է այն ածուռի վրայ, որտեղ իր վերարկուն է:) Վուր տիսնին, ինչ կ'օսին... (Վերարկուի ծայրով ծածկում է:) Սկեսուրիտ բարովելիս էնէնց կանգնի առչիւր, վուր վունչիչ շտեսնէ դուս տանելիս... (Ոտի ծայն լսելով:) Դէ, չնւտ արա, գալիս ին:

ԹԱԼԱԼ, շտապով հանելով հեշտոդարանի երկրորդ ձգոցից սեւ շալ ու վերարկու եւ ձգոցը ներս մղելով:

Պրծայ, հազիր իմ:

Զգելով վերարկուն ածուռի վրայ, իսկ շալը գլխին, բանալին մոռանում է հեշտոդարանի ձգոցի վրայ:

Տ Ե Ս Ի Լ Դ

ՆՐԱՆՔ, ՍԱՆՎԷԼ

ՍԱՆՎԷԼ, մտնում է դիմացի դռնից:

Օ', խնամի՛, բարի իրիգուն. էս վճարթէնը:

ԷԼԻՍԱԲԷԴ

Ասծու բարին, խնամի ջան... Ախչկաս էս գիշիր տուն իմ ասնում:

ՍԱՆՎԷԼ

Փառք աստծու. ձիւ մէ չարա էլաւ էս խղճին, թէ չէ՛ նստած մէ գլուխ դիպի ախ ու վախ է քաշում... էս մէ շափաթ է խօ, ինչ սրան չավարար դուս տարար, խիստ աւելցրուց արտըսունքը... Սրա միխկու էլ չկամ, Աստուծ գիղենայ... (Թալալին:) Վունց իս, հարսի ջան:

ԹԱԼԱԼ

Զիդ լաւ ունենամ. կամ, էլի՛:

ՍԱՆՎԷԼ

Աստուծ օղորմած է... Լաւ ախպէր փչացաւ իմը, ամա էլ նա-փանդա... Իմ աէր ու տիրականը նա էր:

ԷԼԻՍԱԲԷԴ

Ինչ նրան օր պակսեցաւ, վուրթի, Աստուծ քիզ աւելցնէ:

Թալալը հայելում ուղղվում է:

ՍԱՆՎԷԼ

Ըմբրով կշտանաս, դէդի... էլի փառք Աստծուն՝ քու ախչկան միզ համա մխիթարութիւն էթուղ... Միք տանու չրաղը սա է:

ԷԼԻՍԱԲԷԴ

Աստուծ քու չրաղին քիզ արժանի անէ, վուրթի:

ՍԱՆՎԷԼ

Է՛հ, դէդի, էլ էտու համա ո՞վ է փիքը անում. թաք մէ սա լաւ ըլի, ուրիշ դարդ չունիմ, աւատան... էնէնց սիրում իմ սրան, վունցոր մարթ իր հալալ քվիրը սիրէ. գիդէ Աստուծ, դուրթ իմ ասում:

ԷԼԻՍԱԲԷԴ

Մուրագիտ հասնիս, վուրթի:

ՍԱՆՎԷԼ

Աստուծ ձիր մուրագը կատարէ:

ԷԼԻՍԱԲԷԴ

Ապրիս, վուրթի:

ՍԱՆՎԷԼ

Դուք էլ ապրիք, դէդի... (Գրպանից ծխաքարչ հանելով:) էս ո՞ւր է դէդէն, տանը չէ՛:

ԷԼԻՍԱՐԵՆԴ

Վունց չէ, էս սահաթիս դուս գնաց:  
ԹԱԼԱԼ, հեռանալով հայելուց:  
Յօրէն գալիս է:

Տ Ե Ս Ի Լ Ե

ՆՐԱՆՔ, ԿԱՏԱՐԻՆԷ

ԿԱՏԱՐԻՆԷ, մտնելով ձախ դռնից, Թալալին:  
Արձ, հաղրվեցանք, վուրթի:  
ԹԱԼԱԼ  
Հրամանք իս, բատօնօ:  
ԿԱՏԱՐԻՆԷ

Դէ, գնացէք, խնամի ջան, քանի լուս է. էլ մի ուշանաք, ֆաէտօնը հաղիր է: (Ոտները կախ զգած նստելով տախտի վրայ:) Իրիգնահացի կու մնամ սրան, գիղենաս:

ԷԼԻՍԱՐԵՆԴ

Էս գիշիր թո՛ղ միզ մօզ ըլի, խնամի ջան, ու էքուց առուտեան 'ես ինքս կու բերիմ:

Սանվէլը վառում է ծխաքարը եւ ծխում:

ԿԱՏԱՐԻՆԷ

Էտ բանը մի անի, գէթա՛յվա, խնամի ջան. առանց սրան վիճնց կու գիմնամ... Մէ գիշիր վուր սրա ձէնը չիմանամ, խնամի ջան, ջուճջումի գու քամ, Աստուճ գիղենայ. էսէնց սորվեցայ էս քօծին:

ԷԼԻՍԱՐԵՆԴ

Աստուճ քիզ էրգար օր տայ, բատօնօ ջան, վուր

էտէնց սիրում իս իմ Թալալին. ամա թո՛ղ էս մէ գիշիրը ինձ մօզ ըլի:

ԿԱՏԱՐԻՆԷ

Չէ, չէ, խնամի ջան, գէթա՛յվանէ:  
ԷԼԻՍԱՐԵՆԴ

Լաւ, տեսնիմ, բատօնօ ջան:  
ՍԱՆՎԷԼ, Կատարինէին:

Վա, գէղի ջան, խնդրում է, թո՛ղ էս մէ գիշիրը իրան փէշքաշ. նա էլ դէղա է, հալալ չէ իրան, թէ ինչ:

ԷԼԻՍԱՐԵՆԴ

Ա՛յ, ապրիս, վուրթի... Դիփ ձիզ մօզ է ու ձիզ մօզ պիտի ըլի. թո՛ղ էս մէ գիշիրն էլ միզ մօզ անց կայնէ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Լաւ է, խնամի ջան, քու կամքն ըլի... (Թալալին):  
Է՛ստի արի, քօ՛ծ... (Թալալը մօտենում է:) Դուն վիճրդի ուփրօ լաւ աշիս. էստի, թէ քու հօրանց տանը:

ԹԱԼԱԼ

Հայրաթտա վուր էստի լաւ աշիմ. հօրանց տունը շատ վուխտ է մտէս ննզաւ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Հայ, կուղիան... Լաւ է, վուրթի, գնա, բարի գիշիր. ամա աճկիրս ջուր չկարիս էքուց քու ճամփին... (Թալալը մի փոքր հեռանալով, թաշկինակով աչքերը սրբում է:) Էլի կցեցիր... (Էլիսաբեղին): Էլ գերեղմանատուն չտանիս սրան, խնամի ջան. դէմուղէմն էստի զրգէ, թէ Աստուճ կու սիրիս:

ԷԼԻՍԱՐԵՆԴ

Վ՛ո՛ւյ իմ աճկին... Առուտեան վաղ-վաղ էստի

կու՛րի, քու արիւը. ինքս կու բերիմ, վունցոր ասի...  
Է՛հ, բարի գիշիը, բատօնօ ջան:

ԿԱՏԱՐԻՆԷ

Ասածու բարին ձիգ հիգ, խնամի ջան... Էքուց  
առուտեան կու մնամ ձիգ:

ԷԼԻՍԱԲԷԴ

Խնթրջամ կաց... (Մօտենալով Սանվէլին:) Բարով  
մնաս, վուրթի:

ՍԱՆՎԷԼ

Բարով գնաս, գէղի ջան:

Կամենում է ուղեկցել նրան:

ԷԼԻՍԱԲԷԴ, արգելելով:

Մի նիղանա, գէթաղվա:

Ողջունելով Սանվէլին ու կատարինէին, խորհրդաւոր  
հայեացք է ձգում Թալալին եւ շտապով գնում  
դէպի բօխջան:

ԹԱԼԱԼ, մօտենալով կատարինէին:

Բարի գիշիը, բատօնօ ջան:

Կանգնելով կատարինէի առջեւ, ինչպէս մայրը պա-  
տուիրեց, կուրծքը համբուրում է. Էլիսաբէղը  
դուրս է ծլկրվում բօխջան ու վերարկուն ձեռին:

Տ Ե Ս Ի Լ Զ

ՆՐԱՆՔ, առանց ԷԼԻՍԱԲԷԴԻ

ԹԱԼԱԼ, շարունակելով:

Ինչրու ձիգ կու տիսնիմ, իմն ինձ կու հասնի:

ԿԱՏԱՐԻՆԷ

Իմ տարսը դառնաս, վուրթի... Ջանով ու վուխ-  
չութենով լիղնաս:

ԹԱԼԱԼ, ողջունելով կատարինէին, դառնում է Սանվէլին:

Բարի գիշիը, իմ տէքը. գէղին լաւ պահէ:

ՍԱՆՎԷԼ

Բարին քիգ հիգ, հարսի ջան... (Ուղեկցելով Թալա-  
լին մինչեւ դիմացի դուռը:) Բարով գնաս, բարով գաս:

ԿԱՏԱՐԻՆԷ

Տէք ընդ քիգ:

Թալալը ծածկելով վերարկուն եւ ընդհանուր ողջոյն  
տալով, դուրս է գնում դիմացի դռնից:

Տ Ե Ս Ի Լ Է

ԿԱՏԱՐԻՆԷ, ՍԱՆՎԷԼ

ՍԱՆՎԷԼ, ծխաքարը ձեռին:

Խիղճ ակշիկ, միխկս գալիս է, Սստուձ գիղինայ:  
ԿԱՏԱՐԻՆԷ

Է՛հ, վուրթի, միխկը գալուն մինք ինք, թէ չէ՝  
նրան, էսօր է, թէ էքուց, մէ չարա կու՛րի, էլի:

ՍԱՆՎԷԼ

Վունց թէ չարա կու՛րի:

ԿԱՏԱՐԻՆԷ

Վունցոր մէկէլներուն չարա է ըլում, վունց պիտի  
ըլի... Մէ էրկու տարվան էգնէն վիկուկենայ ու  
մարթու կ'էհայ. այ, վունց էլ չարա կու՛րի:

ՍԱՆՎԷԼ, նստելով բազմոցի վրայ:

Է՛հ, գէղի, հէստի բան ասա, վուր բանի նման

ըլի: Գանա միր հարս Թալալը էտ հանգի ախշիկ է.  
վրէն չէ էրեւում:

ԿՍՏԱՐԻՆԷ

Ա՛յ, տուտուցանաս դուն. բաս չէ ու քու դէղի  
պէս նահալին տակը կու վիթեցնէ... Ջէհէլ ախշիկ  
ու սիրուն... էն ճրէլ աճկերուն թամաշա իս անձում.  
տակը հարուր սատանա կուլի ման գալի... էսօր  
վայ է տալի, սուր է անոււմ, էքուց էլօր մէ ուրիշի  
մօդ նստած կ'օսէ՝ շէն աջօրի խար ցխօնէրուշ-  
ուս\*):

ՍԱՆՎԷԼ, առանձին եւ ցածր ձայնով:

Վայ էն օրին:

ԿՍՏԱՐԻՆԷ, ծնկանը խփելով:

Ափսճւս, ափսճւս, Միխակ ջան, վուրթի, վուշ էր  
ունեցի քիզ քու դէղէն:

ՍԱՆՎԷԼ

է՛հ, թարզը տու, դէղի ջան, Աստուձ կու սի-  
բիս... Ինչ էլաւ, էլաւ. ինչ կու օտկինք:

ԿՍՏԱՐԻՆԷ

էրանի դուն էլ է մէ բանի կանգնիս. ինչ իս  
պարապ ալամօ տուն ու դուս անում:

ՍԱՆՎԷԼ

Վո՛ւր գլխամեռ չի ուղի, դէղի ջան, ամա ինչ  
անիմ. մայա չունիմ, մասկան. տէր չունիմ ու տի-  
բական... էն մէ տէրն ունէի, էն էլ Աստուձ խլից...  
Փալաբաշութին խօ չիմ կանա անի սւ... Մէ քիշ  
փուղ պիտի ըլի ձեռիս, վուր մէ պապիրօզի դուքան  
էլ է մախնց բաց անիմ:

\*) Վրացերէն է. — Դու աւելի լաւն ես քան հանգուցեալը:

ԿՍՏԱՐԻՆԷ

Դուն վուր տղամարթ իս ու չիս կանացի ճարի,  
'ես վա՛րդանց ճարիմ քիզ համա:

ՍԱՆՎԷԼ

Ա՛րի ճարէ... (Բերանը բաց անելով եւ առաստաղին  
նայելով): Ա՛աա... թո՛ղ դէվեր ածէ Աստուձ, էլի:

ԿՍՏԱՐԻՆԷ

էտէնց արիւր, վուրթի, վուր դառ ու դարդակ  
մնացիւր ինչկի էսօր:

ՍԱՆՎԷԼ

Գիդիս, դէղի, ինչ ասիմ. ամա չըզբվիս, գէ-  
թաղվա... էս մէ քանի օր է, մտկումս մէ բան անց  
կացաւ, վունցոր օրթունք դուրս ուտում է. ամա չիմ  
համարցակվում, վուր ասիմ:

ԿՍՏԱՐԻՆԷ

Ի՞նչ է, ինչ բան է, վուրթի:

ՍԱՆՎԷԼ, վեր կենալով տեղից:

Գէթաղվա, չըզբվիս, դէղի... (Ծխաբարձը մի կողմ  
դնելով եւ մօտենալով կատարինէին): էս միր հարսը,  
վուր էնդդա ախնեղէնիւրը էնդի ածած ունէ...

Մատնանիշ անելով հեշտղարանը:

ԿՍՏԱՐԻՆԷ

Հա՛, ինչ է:

ՍԱՆՎԷԼ

Ախար, նա խօ, էս ջեր մէ տարի էլ կու անց կե-  
նայ, էնդունք չի բանեցնի... Հիմի չի ըլի, վուր մէ  
բարաթ իրան հասկացնինք, վուր մէ էրկու իմքին  
տայ ինձ, տանիմ Լօմբարդումը գրաւ դնիմ: էրկու  
ամսումը իր շահով հիդ իրան տամ, Աստուձ գիդենայ:

ԿԱՏԱՐԻՆԷ, վրդովուած:

Վնւյ, քոռանամ ու կուրանամ 'ես, վուրթի... Ու-  
ղմւմ իս՝ աշխրբի մասխարա դառնանք... Ամութ չէ,  
վուրթի... Ես իմ բերանը վննց պիտի դորայ, ես  
քունը, վուր էտ թաւուր բանը հարսին ասինք, ես  
նրա անգաճը գցինք. գեղինը վուր մտնիմ, էն լաւ  
է, վուրթի:

ՍԱՆՎԷԼ

Բաս ինչ անիմ, դէդի:

Կանգնում է մօր առաջ:

ԿԱՏԱՐԻՆԷ

Ինչոր գ'ուզիս, վուրթի, ամա էտ բանը մտկէ-  
մէտ հանէ:

ՍԱՆՎԷԼ, մտածմունքի մէջ ընկղմած, միքանի անգամ  
անց ու դարձ է անում. յետոյ յանկարծ կանգնում է հեշտ-  
դարանի մօտ եւ բռունցքով խփելով վրան:

Ը՛հ, քու դինը, քու գինը... (Տեսնելով բանալին  
հեշտդարանի ձգոցի վրայ:) Սո՛ւ, էստի մտիկ, բալնիբը  
մտէն է գցի, դէդի:

ԿԱՏԱՐԻՆԷ, վեր թռչելով տեղից:

Ի՛հ, դարդու նրա միտին էլ է մոլըրվի, վուրթի,  
ինձպէս... (Սանվէլը հանելով բանալին երկրորդ ձգոցից,  
կամենում է դուրս քաշել վերեւի ձգոցը:) Մի անի, մի  
անի, վուրթի. ինձմէն չիս պրծնի, քու արիւը:

ՍԱՆՎԷԼ, յետ նայելով:

Վան, լսօ չիմ գողնում. մէ տեսնիմ՝ վնւրն ուփրօ  
ձեռք կու տայ... (Դուրս է քաշում ձգոցը:) Էս ինչ է,  
ցափ դարդակ է:

ԿԱՏԱՐԻՆԷ

Վննց թէ դարդակ է, ինչ իս ասում... (Նայելով

ձգոցի մէջ:) Էս ինչ է... (Բուր ձգոցները մէկ-մէկ շտա-  
պով դուրս քաշելով:) Վնյ... Դիփ տարիլ է, դիփ. էլ  
իսկի մէ ալնեղէն չէ թողի էստի էն սիւ-էրեսը...  
Չմսի քիզ, վուր սատանութենով լիքն է:

ՍԱՆՎԷԼ

Վան, վան, վան, վան... Էս ինչ է արի... Իժում  
ինչ հանգն էի սիրում 'ես նրան, է... հալալ սրտով,  
Աստուձ գիղհնայ, դէդի:

Մնում է ապշած:

ԿԱՏԱՐԻՆԷ

Հիմի ստէ, քանի կանաս, իրան էլ ու իր գուղ-  
աւազակ մօրն էլ... Աստուձ անէ նրանց դիւանն ու  
դադաստանը, հը՛... Գնա, գնա, հասի մէ էդնէն էն  
կապ-կտրածներուն... Էս ինչ ին արի էն սիւ-սրտով-  
նիրը... (Սանվէլը կանգնած է անշարժ:) Չիս իմանում,  
տժ. քիզ իմ ասում... Չիս գնում:

ՍԱՆՎԷԼ

Ո՛ւր գնամ, ինչ իս ասում, դէդի... Նրանք հիմի  
տանն էլ կուլին:

ԿԱՏԱՐԻՆԷ

Բաս լաւ, մէտի գնանք... Թո՛ղ մէքիչ միթնի,  
ինչրու 'ես էլ կու հաղբվիմ... (Անցնելով հեշտդարանի  
առջեւից, կրկին նայում է վերեւի ձգոցի մէջ:) Տարիլ ին,  
գողցիլ ին, փախցրիլ ին... Տիս թէ՛ ինչ օյին էկան  
միը գլխին էն աննամուսնիբը՛:

Դուրս է նետվում ձախ դռնից:

1007  
32376

## Տ Ե Ս Ի Լ Ե

ՍԱՆՎԷԼ, մենակ:

Վայ, վայ, վայ, վայ... Մտիկ թէ՛ հրիշտըքի կա-  
չու տակ ինչ սատանայ է էլի նստած... Կերան...  
Յէ... Քու հանին է, Սանվել... Քիզ սվ էր ասում՝  
ուշկ ու միտքդ նրա վրայ դաթրեցնիս, գիշիը ցերեկ  
նրա վրայ փիքը անիս, սուս ու փուս սիրիս նրան  
քու մակումը... Իմ բախտին էլ ինչ ասիմ... Գնահ  
հիմի, աճկդ դուս էկան. հիմի էլ էնէնց սուս ու փուս  
անքահ ու տանջվի, քանի կանաս... Ի՞նչ չարա կայ իմ  
սարսաղ գլխին... Վո՞ւնց ազատվիմ... (Ձեռը սրտին տա-  
նելով:) Էս մունդրէկ սրտի օխտէմէն վո՞ւնց գամ. ինչ  
անիմ 'ես սրան... (Բռունցք արած, բժամատով խփում  
է սրտին:) Վո՞ւնց...

Դուրս է վազում ձախ դռնից: Վարագոյրը իջնում է:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Բեմը ներկայացնում է Թալալի հօրանց տանը մի վայելուչ  
հիւրասենեակ երեք դռնով՝ աջ, ձախ և զիմացը: Վերջի  
դռան աջ ու ձախ կողմը լուսամուտներ, որոնց միջով,  
նաև դռնից, երևում են գոյնզգոյն թղթէ լապտերներով  
լուսաւորած պատշգամբ և նրա ետևից, խորքում, պար-  
տէզի կանաչ ծառերի միջանի գազաթներ հասած պը-  
տուղներով: Դիմացի դուռը և լուսամուտները ամբողջ  
ժամանակ բաց են: Երկնքում փայլում է լուսինը, որ  
նոյնպէս լուսաւորում է ծառերի տերևները: Հիւրասենեա-  
կը զարդարած է գեղեցիկ կահ-կարասիքով. իսկ դռները  
և լուսամուտները—թաւիշէ դրապրիններով, վերջիննե-  
րը—նաև սպիտակ տիւլէ բացուած վարագոյրներով: Ա-  
ռաստաղից կախած է ոսկեգօծ ջահ վառ մոմերով: Ե-  
տակը ամբողջապէս ծածկած է գորգով: Աջ կողմը բազ-  
մոց, բազկաթոռներ և թանկագին սփռոցով ծածկած  
սովորական սեղան, որի վրայ դրած են ծաղկէ փունջ  
և վառ լապտեր: Ձախ կողմը՝ ընկողմնարան, բոլորակ  
փոքրիկ սեղան և բազկաթոռ: Ուր հարկն է աթոռներ,  
հայելիներ, թղթախաղի ծալովի սեղաններ, վառ լապ-  
տերներ, կանդէլաբրներ և աշտանակներ: Դրսից եկող-  
ները գալիս են պատշգամբի աջ կողմից, անցնելով աջա-  
կողմեան լուսամուտի առջևով:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

Օ Հ Ա Ն Է Ս, Ա Ի Ե Տ Ի Ք

Օ Հ Ա Ն Է Ս, աջ կողմը, բազմոցի վրայ նստած:  
 Մ'անխառն... Կարեքը շատ ճամփայ կու սորվեցնէ  
 մարթու ու քաղցածութիւնը շատ բան կ'օնիլ տա:  
 Ա Ի Ե Տ Ի Ք, ձախ կողմը, ընկողմարանի վրայ նստած:  
 Քու արիւը, վուր գնան ու գնա. թային Աստու  
 մօզ մէ վարցկ ունէիք, վճարից... Հէստիկ է, վուր  
 էսէնց՝ ալ... (Երկու մեռը յետ ու առաջ տանելով):  
 զմզմում է:

Օ Հ Ա Ն Է Ս

'Նս էլ էտուըը թամահ ննգայ, թէ չէ՛ էն տարսը  
 մարթուն ախչիկ կու տէր... Ասում ին՝ 'երիքսան  
 տարեկան աւել կու'լի:

Ա Ի Ե Տ Ի Ք

է՛հ, տարին ինչ խելք ունէ, Օհանէս ջան, ի՛նչ  
 իս ասում. տեսնում իս շիմշատի պէս ման է գալի...  
 Նրա մօզ հարսուն տարեկնին էլ շէարցլավինօս:

Օ Հ Ա Ն Է Ս

Չատ լաւ իս ասում, Աւետիք ջան. ամա մենակ  
 էտ չէ իմ դարդը... Առչի կնգամէն յօրէն վից էրե-  
 խայ ունէ. հանար-մասխարութիւն չէ նրանց զալմա-  
 դալին դիմնալը:

Ա Ի Ե Տ Ի Ք

Արմընում իմ 'ես քու խիլքէմէն... էտ նա դարդ  
 անէ, ով սիլիթ շունէ... Էնդադա փուղ ու կարողու-

թենին թէգուղ տասնուվից էրեխայ ըլի, ի՛նչ հա-  
 ջաթ. դիփունանցը վուր ինչու բողազը լքցնիս, էլի  
 աշխրբի դօվլաթ կու մնայ... Վոնց ճարից էնդադա  
 փուղը, ախպէր. վուր փիքը իմ անում, բերանս բաց  
 է մնում:

Օ Հ Ա Ն Է Ս

Ինչի՛, ախպէր. վիրշի դօշունօրին լաւ փողրաթ  
 ունէր...

Ա Ի Ե Տ Ի Ք

Հն, էտ փողրթումը, ասում ին, խիտ շէնա-  
 ցաւ. ամա փողրթով էտէնց էլ շէնանալ կու'լի...  
 Ուստա մարթ է, ի՛նչ անիս, ախպէր:

Օ Հ Ա Ն Է Ս

է՛հ, Աստուձ վիրշը բարի անէ... էս ումիկը կի  
 ունիմ, վուր ինչ ախկըտութիւն քաշեցինք ինչրի էսօր,  
 յօրէսի դէնը կու'լի վիրշ ըլի... էսէնց էկաւ բանս,  
 ի՛նչ արած... Փէշակումս էլ խէր չկայ, ախպէր. ֆար-  
 րիկէքն ու զալօդնիրը շատացաւ, ինձպէմներու օջա-  
 խը քանդվեցաւ... Ո՞ւր է վաղուցվան ժամանակը,  
 վուր դիփունի համա մատով շանց տալու վնրպիտ  
 էի. տաս-տասէրկու քարգար էի պահում, տասնու-  
 հինգ աւել աշկիրտ ունէի. հիմի կի օշով մարթա-  
 հէսար էլ չէ գցում ինձ:

Ա Ի Ե Տ Ի Ք

էտէնց է, Օհանէս ջան. մարթ վուր փուղ ու կա-  
 րողութենէմէն զրգըվում է, նրա խաթը ու պատիվն  
 էլ հիզն ին թաղում մարթիք... Երևում է՝ էտ բնու-  
 թենի է ստիղծած աթմորթին, ի՛նչ անիս. հազ թէ  
 իրաուր դիփ մէկ ին... էլի եազը էնէնց չէ դաղում

մարթու սիրտը, վունցոր իրաւուրը... Կաշուս վրայ փոքրած բան իմ ասում, լաւ գիղենաս... (Տեղից վեր է կենում եւ այս ու այն կողմը նայելով, մտածնում է Օհանէսին:) Էս մէքանի տարի առաջ բանս վուր ձախ-վեցաւ ու առուտուրս ծռվեցաւ, մէխօսկով՝ ուտելու հացս վուր պակսեցաւ, դիփունի համա աճկի փուշ էի դրուստ. դիփունիքը էրեսը շուռ տվին ու քուշումը ռաստ գալիս հէնց բունէ գլուխ էլ չէին տալի ինձ... Հիմի կի մէքիչ վուր յիդ ամալի էկայ, սիրելի բարեկամները\*) նուր մէկանց կցեցին իրանց սիլի-բիլիքն ու օրթում հաւատը, վուր իմ խաթր ու պատիւը շատ ունին. ամա էլ օշովի չիմ աւտում 'ես նրանցը:

ՕՀԱՆԷՍ, նոյնպէս վեր է կենում:

'Ես էտ դարդակ խօսկիրն էլ չիմ իմանում հիմի իմ սիրելի բարեկամներէմէն, ինչ խօսկիր քիդ ին ասում էսօր քու սիրելի բարեկամները. ուր մնաց, վուր նրանք ինձ դուրթ սիրին ու պատուին: Ետդերէմէն էլ ինչ գանգտվի մարթ... (Ղուռ անց ու դարձ է անում:) Խաթրն էլ կորաւ ինձ համա, Աւետիք ջան, պատիվն էլ... Գնաց դիփ մէտի. էլ վունց մէկի համա մէ գրօշ չաժիմ, ինչ արած... Սիպտայ հացս վաղ կերայ, մնաց սիւ հացը... Էս մէ տունն ու էն բախչէն է ձեռիս, էն էլ գրաւ է. էսօր է, թէ էքուց՝ տօրգով կու ծախին դիփ մէտի: Տեսնիմ հիմի՝ վունց է Աստուձ օտ-

\*) Ասում են և՛ բարեկամի, բաց թողնելով և և միւս հողովներում. — բարեկամու, բարեկամներէմէն կամ բարեկամերէն, և այլն:

կում ու ազատում ինձ էս սիւ ու մութ օրէմէն... (Տոյց տալով հիւրասենեակի կահ-կարասիքը եւ զարդարանքը:) Ա՛յ, տեսնում իմ. դիփ բան-ուզովի է, Աստուձ գիղենայ... Ղուլուղչիքը խօս՝ մէկին դուն զրգեցիր կլուրէմէն ու մէկէլը բան-ուզովի է ու բան-ուզովի. իմ լաշաթրիան պատի բիջը չէր սազ գայ էս գիչիը էստի... Հարկներու գլուխը տարայ էսօր, խան մէկինն ու խան մէկէլինը, վուր (Կրկին մտածանիչ անելով հիւրասենեակի կարք ու սարքը:) էստունը բան տան... Չատ աղանչաք անելէն շանէքս ցաւեցաւ:

ԱՒԵՏԻՔ, կրկին նստելով:

Բնս, ախար, վուր ասում իմ... Մէ էրկու սահաթվան համա միթամ ինչ էր սրանց մախաթը, վուր էտղաղա աղանչաք էին անիլ տալի... (Նստում է եւ Օհանէսը:) Աբն, մէ ունևուր մարթ էիր էլի, թէ իրանք էւէտ չէին բերի ու իրանց ձեռով չէին դարսի էստի, վունցոր դարսած է... Խօսկի վրայ իմ ասում, թէ չէ՝ ունևուրը խօ առանց նրանցն էլ ունէ ու ունէ էստունը:

ՕՀԱՆԷՍ

Մէ հարևանս քու ասածի վրա ուփրօ հիռու գընաց... Ջեր խիստ դալիս կանգնեցաւ, վուր նրամէն մէքանի իմքին բան ուղեցի. հէքս վուր գերեզմնէմէն վիկենայ, ասում է, չիմ կանա բան տայ, կ'օսէ... Ամա 'եփոր իմացաւ, վուր էնէնց հարուստ փեսայ իմ ճարում, չէ թէ՛ ինչ ուզում էի, էրիտ էնդունք, վիրըը էս զանալէսկէքն էլ, առանց իմ ասելու ու խնդրելու, իրան իրան զրգից, ուտին էլ հիղը, ու քաշ անիլ էրիտ էստի, վունցոր տեսնում իս... Չիմ գիղի

Թէ ինչու՞մը պիտի պէտկ զայ նրան իմ փեսի հա-  
րըստութիւնը:

ԱԻԵՏԻՔ

Գիղիմ, գիղիմ, Օհանէս ջան, փորցիլ իմ, կու  
ճանչնամ՝ ինչ պտուղիւր էլ ին... Հարստութեանի ձէնը  
վուր իմանան, չէ թէ՛ հօր գերեզմանը, վուրթունն  
էլ չին խնահի, քու արիւր:

Աջ դռնից մտնում է չէրքէզկաւոր ծառան:

Տ Ե Ս Ի Լ Բ

ՆՐԱՆՔ, ԾԱՌԱՅ

ԾԱՌԱՅ, Օհանէսին:

Աղա, սաղանդարնիւրն ին, էկան:

ՕՀԱՆԷՍ

Լաւ, թո՛ղ էնդի կենան. 'եփօր վուխտը կու'լի, 'ես  
կու իմաց անիմ:

Ծառան դուրս է գնում նոյն դռնից:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՕՀԱՆԷՍ, ԱԻԵՏԻՔ

ԱԻԵՏԻՔ

Հաղիւր էստի ըլին, խաղ ասի՛ն:

ՕՀԱՆԷՍ

Քի դրուստն ասիմ, Աւետիք ջան, սաղանդրի սիրտ  
չունիմ. էն էլ Մաթօին խօսկ տվի, կանչեցի... Ջեր  
տեսնինք բանը վունց է գնում:

ԱԻԵՏԻՔ

Գուն գիղիս... էտ էլ մէ ուռումուլի բան է դուս  
գալի՛ սաղանդար ըլի ու դժնաղնիւր չէ:

ՕՀԱՆԷՍ

Ի՛նչ անիս, էտէնց կամեցաւ նորափեսէն, լաւ գի-  
ղիս... 'ես էլ մենակ քիզ իմաց արի, ուրիշ սրտա-  
ցաւ բարեկամ էլ օշով չունիմ. համ էլ մէկին վուր  
մեծըրում իս ու մէկէլին չէ, դաւի-դառարա է դառ-  
նում դրուստ:

ԱԻԵՏԻՔ

էտ խօ էտէնց է ու էտէնց:

Տ Ե Ս Ի Լ Գ

ՆՐԱՆՔ, ՄԱԹՕ

ՄԱԹՕ, վերարկուով մտնելով դիմացի դռնից:

Աբա՛, հաղիւր լիք... էս լաւ իք սարքվի՛:

ՕՀԱՆԷՍ, վեր կենալով:

Մի՛նք հաղիւր ինք, դուն վո՞նց իս:

ՄԱԹՕ, վերարկուն վերցնելով:

'Ես էլ, վունցոր տեսնում իք, իմ խօսկին դրուստ  
իմ... (Վերարկուն ձգում է դիմացի դռան մօտ դրած  
աթռոխ վրայ:) էս նմուտիս էլէտ էստի կու'լի:

ՕՀԱՆԷՍ

Հա՛, դնամ ասիմ...

Միքանի քայլ գնում է:

ՄԱԹՕ

Սաղանդար խօ կու'լի՛:

ՕՋԱՆԷՍ

Էստի ին:

ՄԱԹՕ

Լնա... 'ես թէ նրան խիւրէն չարի էս գիշիր ու կու տեսնիր:

ՕՋԱՆԷՍ

Մախլաս... Ինչ չանիս, էն է արմընալուն... (Վերցնելով Մաթոյի վերարկուն:) Էս դուս իմ տանում:

ՄԱԹՕ, մօտ վաղելով:

Վնչ իմ աճկին. հրամանքդ ս'ըր իս նիղանում, գէթաղվա:

ՕՋԱՆԷՍ

Ի՞նչ կայ, վուր...

ՄԱԹՕ

Արն, 'ես բաց աճկով կու թողնիմ... (Խելով վերարկուն, ձախ դոնից հասցնում է մէկին:) Էս էտի կենայ:

Օհանէսը դուրս է գնում այն դոնից:

Տ Ե Ս Ի Լ Ե

Ա.Ի.ԵՏԻ.Ք, ՄԱԹՕ

Ա.Ի.ԵՏԻ.Ք

Ղօչնղ, Մաթօ, 'ես ու իմ հոքին:

ՄԱԹՕ, նստելով, բազմոցի մօտ, բազկաթոռի վրայ:

Ինչի՞նչ ղօչնղ չիմ ըլի. դուն փնղ ասա, թէ չէ՛ մանն բան կու բաշարիմ... Քիչ ախշիկ իմ մարթու տվի. կէս քաղաքը իմ նշնած է: Չէնչաք ըլի մէկ մէկու հաւնին: Չէ, միղայի Աստձու, ախշկան սով է հարցնում. հէնչաք ըլի՛ իրան ախշկան հաւնին:

Ա.Ի.ԵՏԻ.Ք

Իժում՝ էտ վննց իս անում, վուր մէ գլուխ դիփ հաւնեցնիլ իս տալի:

ՄԱԹՕ

Էտու վրայ էլ հիշտ բան... Խիղճ տղէն փուղաւոր ախշիկ է պտտում ու փուղաւորը—սիրուն. մնում է ախշկայ տնդիլը... Տանու ախշկերանց համա դիփունի վրայ աշող տիղը՝ Սիօնն է, նորաչէնը, Փէթխայինը, խանդիսխան՝ Վանքը, Մէյդնի Սուրփ Գէվուրքը ու էլի ուրիշ էգեղեցիք, վուրնոր ախշկայ համա ուփրօ մօղիկ է. տղէն, թո՛ղ ջանը դուս գայ, վաղի, քանի կանայ, իր բախտը գթնելու... Տունն ին գնում, պարուն դուն իմն իս, էգեղեցին՝ ախշիկն էլ, տղէն էլ ու՛ թէժ աղօթիկ անելիս, մէկ մէկու զօրա աղէն էլ ու՛ թէժ աղօթիկ անելիս, մէկ մէկու զօրա խիթում ին, ետ թէ չէ՛ Աստուձաձնի առչիւր մուս վառելիս, տղէն մէրաշ արմունքը գիբցնում է ախշկան, էնէնց, միթամ սլատահմունքով, ու բանը էնդի էւէտ շինվում է ախշկանն էլ, իմն էլ... էտ Աստուձաձնի օղորմութենով է ըլում, փուխ էհամ նրա զօրութենի... Թէ էգեղեցին չէ ըլում, քուշի դուրը խօ էնդի է ու էնդի, ետ թէ չէ՛ հարկնի տունը, Մուշթէիդը սկաշկէքը ու ուրիշ էլի շատ տիղիք, ումն ինչ սաղ գու քայ, ու վուրդի աւելի ձեռք կու տայ... (Չայնը փոխելով:) Կլուրնիլը, թէատրիլը, բուլվարնիլն ու բաղիլը միլ ղայիլի ախշկերանց համա չէ... էնդի ման էկող ախշկիլըն ուրիշ ին, (Մատը շրթունքին տանելով:) բարիչնէք ին, մօղնի օմքնիլ ին. իրանց բանը իրանք էւէտ ին շինում ու միղպէսներու հացը կտրում... չէտը կնիլը կան նրանց մէշը, վուր ամեն մէկը քսան



ԱԻԵՏԻՔ

Լաւ խալաթի արժանի իս, Մաթօ:

ՄԱԹՕ

Խնալաթը շինեալ թոյնի... (Մատնեղով փող ակնարկելով): Է՛ս, է՛ս, ա՛յ:

ԱԻԵՏԻՔ

Օ՛հ, հօ, հօ, հօ... Դուն հիմի պիտի լաւ ըլիս քիզ համա, Մաթօ, ա՛յ:

ՄԱԹՕ

Վնւրդի է, չկայ, Աւետիք:

ԱԻԵՏԻՔ

Ինչի՞, դէզի: Կէս քաղաքն, ասում իս, դուն իս նշնի. մարթազուլու տաս-տաս թուման, վուր վիւր էիւր կալի, քիւ քիւ ասիմ՝ մէ քսան հազար մանէթ պիտի փուղ ունենաս քիզ համա:

ՄԱԹՕ

Քսան չէ, եարսուն... Խափում ին, խափում, Աւետիք ջան... Քանի ջեր բանը չէ պրծած՝ հայ, Մաթօ ջան ու Մաթօ ջան, իժում կի տուն էլ տուն չին թողնում... 'Ես էլ հիմի աճկէնեղուն փորում իմ. ինչու էս գլխէն չիմ առնում, վուտն էլ չիմ տուն դնիլ տալի, քու արիւր: Ա՛յ, հէնց էս սահաթիս, ինչու էս քու պարուն Աղայօին եարսուն թումանը չհամբրիլ տվի, ձեռը չվիկալայ:

ԱԻԵՏԻՔ

Օ՛հ, հօ, հօ, հօ... հորուս ինչ իս ասում իժում:

ՄԱԹՕ

Հորին ինչ բան ունէ էստումը: Բաս էն պառաւ

\*) Վրացերէն հ. — Ո՞ւմը կը վայելէ: (Ինչ յիշելու է):

քօփակին ո՞վ էր ուզում: Ի՛նչ անիմ թէ դովլըթումը խիխտում է... էրի՛տ, ասի՛ համեցէք... Ջեր հալա քսան թուման էլ ուրիշ խոստացաւ. ամա մեռաւ կարվեցաւ, հիմի չէրիտ: Էտ էլ հարսնըքի մէկէլ էքսը, կ'օսէ. ո՞վ գիդէ, ինչ հէսար ունէ:

ԱԻԵՏԻՔ

Ի՛նչ հէսար պիտի ըլի:

ՄԱԹՕ

Վն, մարթ է ու քէվ:

ԱԻԵՏԻՔ

Վուր շտա՞յ, իժում:

ՄԱԹՕ

Վննց կանայ. կու թո՞ղնիմ, վուր դա էլ խափէ ինձ... Մի վախենա, նրա ջիզը չիմ ուտի, լիամը ձեռիս է. հէսար բան բերիմ գլուխը, վուր հատ տրխով փախչելու դառնայ քախկէմէն:

ԱԻԵՏԻՔ

Գիդիմ, գիդիմ, կու ճանչնամ քիզ... Դուն ինձ ասա՛ սրանցմէն ինչ վիկալար:

ՄԱԹՕ

Է՛հ, սրանք ինչ սիւ քար ունին, Աւետիք ջան, ինձ ինչ էին տվի... Թանխէք, մենակ թանխէք... Ումիկ ունիմ՝ չխափին ու թէ սրանք էլ կու խափին, ախալազալա էն փուղի գլուխը. իրանք լաւ ըլին, ինչ կանամ անի, մէ բաշ քարվասինեղուն կրակ շտամ, (երեսը ծամածռելով ծիծաղում է:) հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԱԻԵՏԻՔ

Լնա կայ իր համա Աղայօն, չէ՛, Մաթօ:

ՄԱԹՕ

Փահ... էրկու-էրկու քարվասլէն խօ գիփուները

աճկով տեսնում ին, չուրս տիղ մինձ տնիր ունէ, տաս-  
տասէրկու դուքան ունէ... Հիմի փնւղն ասա՛ ունէ ու  
ունէ էն քոփակը:

ԱԻԵՏԻՔ

Տօ, էտղադամին վնւրդի մօղ արաւ անիծածը.  
զանա փօղըըթով վուր մարթ կու շէնանայ, էտէնց  
կու շէնանայ:

ՄԱԹՕ, ձեռը ճակատին տանելով:

Խիլքիտ ասա՛ տոնն արի... Ի՞նչ իս ասում, փօղ-  
բաթը վնւրն է. նրա բանիլը ինձ հարցրու... (Ցածր):  
Հէստիկն է, վուր հատը չունէ. (Այս ու այն կողմը  
նայելով): հաղար ու մէ բան է արի:

ԱԻԵՏԻՔ

Է՛հ:

ՄԱԹՕ

Բան ի՞նչ գիղէիր: (Վեր կենալով տեղից, գնում է,  
ծածուկ նայում է ձախ դռնից. յետոյ մօտենում է Աւե-  
տիքին եւ ձայնը ցածրացնելով): Հէնց էն փօղըըթումը  
ննգրուչը խափից: Տասէրկու հաղար թուման պիտի  
փուղ էին փայ արի, ննգիլը մէբաշ մեռաւ, ութ հա-  
ղար թումանը մէտի վիր խփից. մենակ չուրս հաղարը  
չանց էրիտ, ու էն չուրս հաղարումն էլ, հնգարն,  
ասում է, քրթըմնիր իմ խոստացի դէս ու դէն, կ'օսէ:  
Վիրչը, չիմ գիղի, ննգրուչ վուրփերուն հաղար ու հինգ  
հարուրը թամամ էրիտ, թէ՛ էնդումն էլ էլի մէ բան  
մօգօնից ու դառ ու դարդակ նստեցրուց խղճերուն:

ԱԻԵՏԻՔ

Մաթօ, ինչէր իս ասում. մէ օր հոքի ունիս տա-  
լու, ախար:

ՄԱԹՕ

Վնւյ, իմ հոքին գիղենայ, դրուստ իմ ասում: Ամա  
էս բանը մենակ քիղ իմ ասում, գիղենաս... Չըլիմ  
չիմանամ, օշովու մօղ բերնէտ չդուս թողնիս, թէ  
չէ՛ ինձմէն չիս պրծնի: Թո՛ղ օշովի անգաճը չննգնի.  
անգսկածի սաղ քախկումը չավ կու՛լի:

ԱԻԵՏԻՔ

Չէ, չէ, անխային կաց... Ո՞ւմը պիտի ասիմ:

ՄԱԹՕ, կրկին գնալով դէպի ձախ դուռը:

Օշով չըլի անգաճ դնում... (Գուրս է նայում դռնից.  
յետոյ յետ դառնալով): Ասած է՛ պատն անգաճ ունէ,  
կ'օսէ. վախենում իմ՝ օմքին շիմանայ, վուր էս բանը  
'ես քիղ յիղ իմ ասում... Իբանցմէն իմ իմացի. խոս-  
տովանը ըլի քի մօղ:

ԱԻԵՏԻՔ

Տօ, ո՞վ ինչ գիղէ՛ ի՞նչ ինք խօսում էս դարդակ  
օթախումը... Իժո՞ւմ:

ՄԱԹՕ

Էլ ինչ իժում... Ինչ անի, էնդու վրայ գաս հիմի,  
աղա ջան՛ խուղի 'եղը... Արան, նա շինից նրա բանը,  
այ... Ղօշունօրի հուտն իմացաւ թէ չէ, ինչ քախ-  
կումը խուղի 'եղ կէր, դիփ մէտի առաւ ու դարսից  
սարգըփներումը: Իժում՝ արա-հան, «գորսս դոռ  
պաւտո՞ւյրնցիր». մէկը հարուր աշխատից:

ԱԻԵՏԻՔ

Վնյ, վնյ, վնյ, վնյ... Տօ, 'ես նրան մէ պատ-  
ւական մարթ գիղէի:

ՄԱԹՕ

Պատուական, վննց չէ... Մէ պատուական էլ դուն  
կուլիս փուղի հէսարումը. էլ ինչ ասիլ գ'ուղէ:

ԱԻՆՏԻՔ, տեղից վեր թռչելով:

ՄաթՕ, լիզւիտ աղ արա, թէ չէ...

ՄԱԹՕ

Ի՞նչ է, Պօլիցէն շտանիս ինձ մէբաչ... Իմ վուր-  
թի իս, էրեխայ ձեռիս մինձացի. քի մօդ էլ դրուստ  
չխօսլմ:

ԱԻՆՏԻՔ, ժպտալով գլուխը շարժում է:

Հը-ըյի, ՄաթՕ...

ՄԱԹՕ

Բան ասում իս, ախար. փուղ մօդ անելումը պատ-  
ւականութիւն կուլի... Մէկն ու մէկը վուր վունչիչ  
չունէին ու մէբաչ հարստացան, փուղերումը լվը-  
վում ին հիմի ու դօվլըթումը փըթփըթում: զիփ  
պատւականութենով ու հալալութենով է ճարած,  
զանա չիմ գիղի... Մէ տէր հարցնող ըլի, թէ վմը-  
ղանց... Այ, վուրղանց՝ (Նշանացի՝ ձեռով օդի միջից  
իրբև փողեր է յափշտակում եւ ամեն անգամ բոռնցքը  
գրպանը տանում:) Դիփ էսէնց, զիփ էսէնց... Թո՛ղ  
մօդ անին, քանի կանան ու տարին տասէրկու ամիս  
մէ գլուխ քէփումն ըլին ու գօղումը. վիբչը պիտի  
ախկատ Ղազարոսի արով մնան էն կինըումն ու մէ  
կաթ ջրի համա նրան աղանչար անին... (Հոգոց հա-  
նելով:) Վայ նրանց միխկը... (Աւետիքը նստում է, իսկ  
ինքը սօճուելով:) Ամա ջիբի էշխումն ու փուղ ծպպելուն  
սովոր զիփունի վրայ ուստա-վարալիտն ու վաթարը՝  
(Կրկին մօտենալով Աւետիքին եւ ցածր ձայնով:) էս գի-  
չիրվան նորափեսէն է... Ի՞նչ օրումը կուլի սա էլ էն  
կինըումը, էտ միւսը Աստաճուն է յայտնի. ո՞վ գիղէ,  
էլի ի՞նչ հէսարնիք ուղին էնղի նրամէն... (Աւելի ցածր:)  
Փարթըթի բանն էլ է չիս իմացի:

ԱԻՆՏԻՔ

Ի՞նչ փարթըթէթ:

ՄԱԹՕ

Տօ, դուն էս աշխրբումը չիս, թէ ի՞նչ է... Ի՞նչ  
փարթըթէթ, ասում է... (Համարեա Աւետիքի ականջում:)  
Ախպուր փարթըթէթը:

ԱԻՆՏԻՔ

Վուր չիմ իմանում:

ՄԱԹՕ, դարձեալ ցածր:

Տօ, այ հէնց էս քու աղա Աղալօն... Իր ախպուր-  
մէն փուղ էր դաւի անում... Քանի տարի քաշից էն  
դաւին, հըա... էն խիղճ ախպէրը վուր մեռաւ, էս  
քու պատուական Աղալօն տունն ու աղը վիբ գրիլ  
էրիտ էն խղճինն ու իր հալալ ախպուր փարթըթէթը  
աօրգով ծախիլ էրիտ... Այ քիզ պատուականութիւն:

ԱԻՆՏԻՔ

Կնրի, տօ, պառաւ քավթար, է:

ՄԱԹՕ

Վայ, թօնդրումն էրվիմ, թէ սուտ ըլիմ ասում...  
Ո՛ւր է, պիտի գիբը ըլի, մարթիք ըլին ջոզած, դուս  
գան, էտ թաւուրներու հալ ու ափալը մէ-մէկ քըը-  
քըին ու (տուփ արած ձեռները բաց անելով:) բաց անին  
էսէնց, վուր իրանք էէտ բերանը բաց մնան... Մէ  
հարցնին թէ՛ ի՞նչ հալալ քրտինք ին թափի էն աղա-  
զագէքը, ետ ի՞նչ ջափա քաշի ու ջան բանեցրի... Դիփ  
պատուականութիւն կու դուս գայ, այ, չէ:

ԱԻՆՏԻՔ

Դժուրկն էրէ քիզ, ՄաթՕ... Իժում քու Աստաճուն  
ինչ ջուզար իս տալի, վուր Աղալօի պէս մարթու

համա սրանց մօղ բարի խօսեցար ու բանը գլուխ բերիր:

ՄԱԹՕ

Դիակս, դիակս... Սրանց մօղ բանը 'ես իսկի էլ չիմ կցի... Բաշտան իրանը էէէդ աշլա արին ու խնդրեցին, 'ես էլ կատարեցի. ինչ փխ իմ արի... Մի վախենա, սրանք ինձ վրայ լաւ գիղին՝ ինչ պտուղ էլ վուր է Աղայօն. ամա փնւղն ասա, փնւղը, փնւղն ու հարստութիւնը, վուր դիփունանց աճկիւրը շլացնում է... Արի ու քիպէս գփի մօղ դրուստ-դրուստ խօսի:

ԱԻԵՏԻՔ

Մէ դրուստն էլ դուն կու'լիս, (շեգնօրէն:) հնւրաթտա:

ՄԱԹՕ, յարձակուելով Աւետիքի վրայ:

Ի՞նչ է ասում, քան... Բաս չէ ու դուն կու'լիս ինձ վրայ դրուստն ու հալալը... Ո՞ւղում իս, քու բաղնըսի բօխէն էլ բաց անիմ էս սահաթիս աճկիտ առչիւր ու գիփ մէտի մէ-մէկ մէ-մէկ էրեսիտ ասիմ քու գուրձիւրը. դուն էլ, թէ կանաս, իմն ասա. տեսնիւք քու արարմունքն է թքելու ու մրելու, թէ իմը... Ա՛սա, սսա, էլի:

ԱԻԵՏԻՔ, վեր կենալով:

Լաւ է, լաւ, գլուխս մի տանի, քու հօրն օղորմի:

ՄԱԹՕ

էտէնց, ա՛յ... 'ես քիզ ասում իմ՝ ինձ մի խօսեցնի... (Երեք անգամ բախում են փողոցի դուռը:) Քու չի դուռն է, 'երիք ջէր խփեցին. նա է, էկաւ:

ԱԻԵՏԻՔ

Դուն էստի հանդիւրի, 'ես գնամ ինչքու Օհանէսին իմաց անիմ:

ՄԱԹՕ

Լաւ, լաւ. բանդ տիս... Ինչքու ծանդը ու բարակ նա դիվիր գու քայ էս էրդէն ու մէկ սանդըխանիւրը, 'ես կանամ մէ դարփա քնի էլ:

ԱԻԵՏԻՔ, գլուխը եւ ձեռները շարժելով, առանձին:

Օ՛հ, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛... Է՛ս հանգի էլ կնիկ... «Մ'անն հուշաչ ու ջաւն ուզաւո:»

Վերցնում է գլխարկը եւ դուրս գնում ձախ դռնից:

Տ Ե Ս Ի Լ Զ

ՄԱԹՕ, մենակ:

Պատահանութիւն, ասում է... Հրամանք իս, դէմ ին բերում, վննց չէ... Հը՛մ... Աւտաս իրան վուր ուստ գայ, բողաղին կանգնի, ա՛յ... Հէնց գիղէ, օշով չի գիղի, վուր սուտ կուտը ննգաւ, խալխի փուղիւրը տակն արաւ ու հիմի ուփրօ լաւ է ապրում կանց վաղ: (Գնում է, պատշգամբից դուրս է նայում:) Ջեր վնւրդի է, սանդըխտի վրայ վուտն էլ չէ դրի... (Առաջ գալով:) Փուղի սէր ու պատահանութիւն սիլ է իմացի... (Նստելով:) Վուր մէկ մէկու հիզ չին բարելում, ինչ անիս. խթաղան բարաղան, էն գլխէն էս գլուխը մէկ մէկու դուշման ին... Հարուստ միծամնիր իմ տեսի ու տեսնում իմ հիմի էլ — աղամարթ, թէ կնիկ-արմատ — վուր փուղի խաթիր ծախիլ ին ու էսօր էլ ծախում ին իրանց պատիվն էլ ու անուճն էլ հիղը-սէր մնաց միզպէս բանճպար խալխը, վուր միւր ապրուստը ձլիվ ինք ճարում... էլի ախրաթը խէր

ըլի միրը... (Երգախօսուձեամբ:) Չատ բան, ինչ նրանք  
անում ին, մինք չինք անի, էնդունց շուր շունինք,  
լնյիդ չինք անի... (Սովորական ձայնով:) Է՛հ, ջանգամը  
նորանց գլուխը. ո՞վ է գրքստի աշխրբի բանիրը, վուր  
'ես գրքստիմ, ինձպէս չարչարանքով ու դառը քրանքով  
ապրող անուս ու անգիդում մէ խիղճ կնիկը... Հնուց  
գիրք է ու ասած՝ «Ապրիչ կայ — երկուսի Ե, ապ-  
րիչ կայ — երծուի Ե»... Հայա փառք Աստձուն,  
'ես, նրա օղորմութենով, մէ թիբայ հաց մայինց  
ունիմ. մնացածը ի՛նչ իմ բանն է... (Վեր կենտով:)  
'ես գնամ դէմ ու առաչ, կօկօք նորափեսին հանդի-  
բիմ ու առօք փառօք տուն բերիմ էստի... (Գիմացի  
դանը կանգնած:): Ջեր դիվիբ չէ էկի... (Գուրս է գը-  
նում եւ պատշգամբից նայում:): Սանդըխտներու վրայ  
կանգնեցաւ... Հալրաթ դաթրեցաւ խիղճ պառա  
ջհէլս...

Լոուձին: Աջակողմեան լուսամուտում երեւում է  
Աղալօն, որ հիացած նայում է պարտէզին. յե-  
տոյ չէրքէզկաւոր ծառան առնում է նրա ձեռ-  
նափայտն ու վերարկուն եւ անհետանում է աջ  
կողմը:

Տ Ե Ս Ի Լ Է

ՄԱԹՕ, ԱՂԱԼՕ

ՄԱԹՕ, պատշգամբի վրայ, գիմաւորելով Աղալօն:  
Համեցէք, համեցէք... (Հետեւելով Աղալօնին, որ ներս  
է մտնում գլխարկը ծածկած:): Համեցէք... Բարի ըլի  
քու վուտը:

ԱՂԱԼՕ, գլխարկը վերցնելով:

Ի՛նչ լաւ բախշա ին ունեցի... Արմաղան պտուղ-  
ներով լիքն է ծառիբը:

ՄԱԹՕ

Քիղ համա հէստի պտուղ կայ պատրաստ, վուր  
հատը շունէ քախկումը... (Աղալօն զարմացած նայում  
է հիւրասենեակի կարք ու սարքին:): Համեցէք, նորափե-  
սայ ջան... (Հրաւիրում է դէպի բազմոցը:): Էս վրայ  
քանի ջէրն է:

ԱՂԱԼՕ

Ձէնդ, քօփակ:

Գլխարկը վայր դնելով, գնում է դէպի աջ կողմը:

ՄԱԹՕ

Վա՛, սուտ խօ չիմ ասում... (Աղալօն յօնքերը կի-  
տած յետ է նայում Մաթօին:): Համեցէք նստի. յօրէս  
դուս գու քան... (Աղալօն ուղղվում է աջակողմեան հայե-  
լում, որ կախած է բազմոցի գլխին, ըստ սովորուձեան:)  
Էլի ինձմէն շնորակալ չիս. էս հանգի ախշիկ ճարե-  
ցի քիղ համա ու քօփակ էլ իս ասում ի՛նձ:

ԱՂԱԼՕ, հեռանալով հայելուց:

Բան ի՛նչ իս, վուր քօփակ չիս:

ՄԱԹՕ

Թէ 'ես քօփակ իմ, ախպէր, դուն էլ ինձմէն պա-  
կաս շպիտի ըլիս... 'Երէքսան տարեկան 'ես իմ,  
'Երէքսան տարեկան դուն. հա՛ քօփակնիր ինք ու քօ-  
փակնիր, (Ծիծաղում է:): հա՛, հա՛, հա՛, հա՛...

ԱՂԱԼՕ, նստելով բազմոցի վրայ:

Սո՛ւ, ասում իմ... Դուն մէ ինձ ասա՛ սրանցն էլ  
ասիբ, վուր 'Երէքսան տարեկան իմ:

ՄԱԹՕ

Քիմէն չիմ արմնում, աղա ջան. սատանէն իր  
տունը կու քանդէ... Ասի՛ 'եարսուն ու հինգ եա կու-  
'լիս, սա չէ, (ծիծաղում է:) հա՛, հա՛, հա՛, հա՛... Քիզ  
լինչ, ինչոր ասի. 'ես խօ բանն էնէնց բերի, վուր քիզ  
ուզեցին...

Նստում է:

ԱՂԱԼՕ, ծոցից արծաթէ փորթսիգար հանելով եւ բանալով:  
Ի՞նչս էր պակաս, վուր չէին ուզի:

ՄԱԹՕ

Թէ էն փուղիքը չէիր ունենա, Աղալօ ջան:  
ԱՂԱԼՕ, փորթսիգարը յետ ծոցը դնելով առանց ծխաքարը  
հանելու:

Առանց իմ փուղիքը բաս 'ես վունչիչ չաժիմ:  
ՄԱԹՕ

էա սի կ'օսէ. ինչդ է պակաս... Կարմիր թշիքը,  
կօկօր բիխիքը, մազիքդ սիւ սաթ, սի գիդէ թէ ներ-  
կած է, ջանով, դուաթով, խօսի ու ջուղարդ լաւ,  
լամդդ լաղաթի, սրտով արթար ու հալալ. հա նորա-  
փեսայ իս ու նորափեսայ:

Առանձին, երեսը ծամածռում է:

ԱՂԱԼՕ

Ա՛յ, կու տեսնիս, թէ նորափեսայ չիմ:

ՄԱԹՕ

Գիդիմ, գիդիմ, վիցը մէկիմէն ունիս, վիցն էլ մէ-  
կէլիմէն կ'ունենաս. էլ ինչ ասիլ գ'ուզէ:

ԱՂԱԼՕ

Աստձով:

ՏԵՍԻԼ Ը

ՆՐԱՆՔ, ՕՀԱՆԷՍ

ՕՀԱՆԷՍ, մտնելով ձախ դռնից եւ զխարկը վայր դնելով  
սեղանի վրայ:

Բարի իրիզուն, փեսայ ջան:  
ԱՂԱԼՕ, ոտի կանգնելով:

Բարով, աղա Օհանէս:  
Մաթօն եւս ոտի է կանգնում:  
ՕՀԱՆԷՍ

Բարի սահաթի ըլի... Վա՛, համեցէք նստի:  
ՄԱԹՕ

Աստուձ անփոշիվնիլի անէ:  
ԱՂԱԼՕ

Ամին, Տէր Աստուձ... (Նստում է նոյն տեղը:) Ու-  
միկ ունիմ, աղա Օհանէս, վուր չփոշիվնիլիք... Մի  
վախենաք, դուրթ է պառաւ իմ էրևում, ամա ջեր  
դօշաղ իմ: Փուղ էլ շատ ունիմ. ձիւր օրումը կարիք  
չիք տեսնի... Հրամանդ էլ նստի, է:

ՕՀԱՆԷՍ, նստելով:

Մինք քու մարթութենին թամահ ննպանք, պա-  
րուն Աղալօ:  
ՄԱԹՕ

Մարթութիւն ասիլ ու պրծար... Սրա պատա-  
կանութիւնը դիփունիլի յայտնի է, ու ճշմարտասիրու-  
թենումը խօ հատը շունէ սաղ քախկումը... (Առան-  
ձին, ցածր:) Դրա արիւր:

Նոյնպէս նստում է:

ԱՂԱՂՕ

Փառք իմ Աստձուն, ինչըու էսօր ջեր օշովին արի-  
ժատ չիմ արի, ու ձիր արչկան էնէնց պահիմ, վուր  
մատով շանց տալու ըլի. վուտէմէն ինչըու գրուխը  
դիւփ օսկով ու բրելիանտով կու լքցնիմ... 'ես նրան  
խիտ իմ հանում. էն օրը խօ գերեզմանատանը տե-  
սայ թէ չէ, էն սահաթին սրտումս դաջվեցաւ:

ՄԱԹՕ, առանձին:

Վայ ձիր միխկը, թանղած կնդիրք:

ՕՋԱՆԷՍ

Աստուձ օր տայ ձիդ, աղա ջան:

ԱՂԱՂՕ

Օղօնդ նա էլ ինձ սիրէ, թէ չէ. հոքիս էլ չիմ  
խնահի նրա համա:

ՄԱԹՕ, առանձին:

Մտիկ էս քօփակին:

ՕՋԱՆԷՍ

Էտումը արխային կաց, պարուն Աղալօ:

ՄԱԹՕ, Աղալօին:

Քիպէս աղամարթուն սով չի սիրի... Նէտայի ջա-  
հիլ ըլիմ, 'ես կու նշնվէի քիդ վրայ, (տիծաղում է.)  
հա՛, հա՛, հա՛, հա՛:..

ԱՂԱՂՕ

Օճօ... (Մի կողմ): Մտիկ էս քալթարին:

ՄԱԹՕ

Բախտաւուր արչիկ է, 'ես ու իմ հոքին, վուր քիդ  
է ռաստ գալի... Ամա ուփքօ բախտաւուրը դուն իս,  
վուր էտ հանգի արչիկ իս ուզում. բոյով, բուսա-  
թով, ջէհէլ, սիրուն, խելօք, կտրուկ, բիւան, մարի-

փաթով, տանդիկին՝ վուխը տուն ու տիրդ էնէնց կու  
կառավարէ, վուր էլ ասիլ չի ուզի. ման գալը խօ  
աղունակի 'երիչի է տալի դրուստ, քու արիւր... էս-  
տունց հիդ էլ, ասիլ իմ ու էլի իմ ասում՝ մէ ձէն  
ունէ, մէ ձէն, մէ խաղիր կ'օսէ, վուր ինչ գ'ուղէ ջգրած  
ըլիս, հա դարդուտ, մէ նմուտումը քէփդ բաց կ'օնէ...  
Հիմի խօ, զուքած ու զարթարած վուր տեսնիս,  
խիլքիտ ծէքը կ'էհայ, Աստուձ գիդենայ... Գնա ու  
գնա. ինձմէն պիտի ըլիս շնորակալ...

Ձախ դոնից մտնում են էլիսաբէղը եւ Թաւալը,  
երկունսն էլ զուքուած, ըստ նկարագրուժեան՝ ա-  
ռաջինը մուգ հագուստով, իսկ երկրորդը—բաց-  
կապոյտ դէրիայով եւ զարդարուած զանազան  
ակնեղէններով: Նրանց հետեւում է Աւետիքը:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՆՐԱՆՔ, ԷԼԻՍԱԲԷԳ, ԹԱԼԱԼ, ԱԻԵՏԻՔ

ՄԱԹՕ, շարունակելով:

Ահըն, թէ սուտ իմ ասում:

Ամենքը ոտի են կանգնում:

ԷԼԻՍԱԲԷԳ, առաջ բերելով Թաւալին:

Ա՛յ, փեսայ ջան, թէ սիւերով հանեցար, հիմի  
ուփքօ պիտի հանիս:

ԱՂԱՂՕ, նայելով Թաւալին:

Խօսիկ չունիմ... 'ես սրան վաղ էլ տեսիլ իմ ու  
էն գլխէն էւէտ հանիլ իմ. ամա էնթի շափթին,  
մուշտրու աճկով վուր անդղեցի, ասի՝ գլթայ, ինչ  
ուզում էի:

ՄԱԹՕ, առանձին:

Թէ կու գիրենէի:

ԱՂԱՂՕ, բռնելով Թալալի ձեռք:

Ա՛րի, ա՛րի, ախշիկ, նստի քստի կշտիս... (Նըստեցնում է բազմոցի վրայ իր աջ կողմը եւ ինքն էլ նըստում է կողքին:) Էրկուսս էլ վուրփեէրիք ինք, էրկուսս էլ մէկ մէկու պիտի միտիթարինք... (Թալալը խորը կերպով ողջունում է:): Դուն ինձ ասա՝ քէփումդ գալիս իմ, թէ չէ... (Թալալը քնքշուածեամբ նայում է Աղալօին եւ ժպտում:): Օ՛հ, հօ՛, հօ՛, հօ՛... Ինչ աճկիր իս ունեցի, կու գժվեցնիս դուն ինձ... Ա՛սա, է՛. քէփումդ դալիս իմ:

ԹԱՂԱՂ, ցածր ձայնով եւ համարեա թէ սկանջում:  
Խի՛սա:

ԱՂԱՂՕ, նոյնպէս ցածր:

Օ՛հ, քու հորուն մեռնիմ:

Գրկելով պինդ համբուրում է:

ՄԱԹՕ

Վա՛, է՛յ, էա ս՛վ դարուլ կ՛օնէ. մուրթ-մուրթ պաշ իս անում, ջեր նշանը տու, է՛:

ԱՂԱՂՕ

Գիրիմ, գիրիմ, խամ խօ շիմ... (Գրպաններից հանում է ակնեղէնների հինգ տուփ:): Մէ նշանի մագիէր, իերիք, չուբսը մէտի իմ բերի... էս մատնիք, էս խանչ, էս դօշի քորոց, էս օղիր, էս էլ բրանսլետ. համբըրքէմէս աւել դուս էկաւ:

ՄԱԹՕ, առանձին:

Թաղած կնդերանց մունդուրկնիլը կու՛լի:

ԱՂԱՂՕ, տալով տուփերը Թալալին:

Բարով վայելիս... (Բաց անելով մէկ տուփը, միջից

հանում է Թանկագին մատանի եւ հազցնելով Թալալի մատին:) էս էլ նշան... Ուրախութենի ըլի...

Կրկին համբուրում է նրան:

ՕՅԱՆԷՍ

Աստուձ անփոշիվնելի անէ:

ԵՂԻՍԱԲԷԴ

Մէ բարցի ծիրանաք:

ԱԻԵՏԻՔ եւ ՄԱԹՕ

Ամին, ամին:

ՕՅԱՆԷՍ

Ամին, Տէր Աստուձ... Չամփանակին, (Գնալով դէպի աջ կողմի դուռը:) վա՛, շամփանակին... (Դռնից դէպի կուլիսը:) Բերէք, է՛... Դրանցն էլ ասէք՝ գան... Հա՛, հա՛. դուք էլ համեցէք:

Ծառափնիքը բերում են նոյն դռնից, արծաթափայլ մեծ սկուտեղներով՝ շամպայն, բաղքաւենիք եւ զանազան միւրգ ու մատուցանում են ըստ կարգի: Նրանց ետեւից դուրս են գալիս սազանդարները եւ նստում են խորքում, աջ կողմը, ածուսների վրայ:

Տ Ե Ս Ի Լ Ժ

ՆՐԱՆՔ, ՍԱԶԱՆԴԱՐՆԵՐ

ՕՅԱՆԷՍ, բաժակը ձեռին, մօտենում է նշանուածներին, որ ոտի են կանգնում:

Չնահաւուր ըլի, բախտաւուր ըլիք:

ԱԻՆՏԻՔ, սազանդարներին:

Տո՛ւշ, տո՛ւշ:

Սազանդարները ածում են տուշ:

ԷԼԻՍՄԱՔԷԴ, նոյնպէս մօտենալով նշանուածներին:

Ուրախութեանի ըլի, վուշ կտրվիք մէկզմէկէմէն:

ՄԱԹՕ, նոյնպէս:

Խիթարվիք, վունցոր իմ սիրտը գ'ուզէ:

ԱԻՆՏԻՔ, նոյնպէս:

Աստձու օխնանքը անպակաս ըլի ձիզմէն:

ԱՂԱԼՕ, բաժակը դիպցնելով Աւետիքի բաժակին:

Ա'պրիս, Աւետիք ջան:

Նշանուածները ողջունում են. միւսները խմում են.

տուշը դադարում է:

ԱՂԱԼՕ, բաժակը ձեռին:

Չնորակալ իմ, պարուններ... Չնորակալ իմ, միք հէր ու միք մէր. ձիր օրհնանքն անպակաս ըլի միզմէն: (Թալալին:) Էս էլ քու կինացը. բախտաւուր ըլիս, վունցոր քու հօրն ու մօր սիրտն ու քու սիրտը գ'ուզէ:

Աւետիքի նշանի վրայ սազանդարները կրկին ածում են տուշ:

ԹԱԼԱԼ, ողջունելով Աղալօին, վերցնում է իր բաժակը:

Էս էլ ձիր կինացը, Աստուձ ձիզ էլ անպակաս անէ ինձմէն:

Նշանուածները խմում են եւ նստում իրանց տեղերը.

տուշը դադարում է. ծառաները դնելով սկուտեղները ձախ կողմը, սեղանի վրայ, դուրս են գնում աջ դռնից: Էլիսաբեղն ու Օհանէսը հրքձուանքի մէջ են եւ հիւրասիրում են Մաժօին ու Աւետիքին, որ ուտում, խմում, ցածր խօսում են իրանց մէջ:

ԱՂԱԼՕ, մատուցանելով Թալալին քաղցրաւենի եւ մի խնձոր:

Համեցէք... (Թալալը ողջունելով, առնում է քաղցրաւենին եւ խնձորը:) Պատաւական խնձուր է, քու թշերու նման է դրուստ... (Թալալը կոտորովում է:) Էրևում է ձիր բախչէմէն է:

ԹԱԼԱԼ

Հրամանք իս:

ԱՂԱԼՕ

Լաւ բախչա իք ունեցի, բալկօնէմէն թամաչա էի անում, քէփա էկաւ... Էս տանու միւրքն էլ լան է, ախշիկն էլ... Ամա ինչ գ'ուզէ ըլի, քիզ հիզ վունշիշ չի գայ... (Վերցնելով տուած խնձորը:) Դուն վուր կաս, ուրիշ պտուղ իս. Բնշ ախշիկ կանայ քիզ նմանվի... Էրգար օր ունենաս... Մէ էրկու կնիկ 'ես իմ թաղի, Աստուձ տայ՝ դուն ինձ թաղիս:

Սկսում է խնձորը կծակել:

ԹԱԼԱԼ

Չէ, գէթ աղվա, մարթու թաղիւր դժար բան է. թո՛ղ 'ես ձիր մահը շտեմնիմ:

ԱՂԱԼՕ

Էս Աստուձ ձեռին է... Մինք հիմիկվան բան խօսինք... Ա'նումդ, մնամ վուր՝ Թալալ է:

ԹԱԼԱԼ

Հրամանք իս:

ԱՂԱԼՕ

Թալալ անուձը միք թաղին չի սազ գայ... 'ես քիզ Թալալինկա կու կանչիմ, թէ ղարուլ իս:

ԹԱԼԱԼ

Վունցոր ձիր կամքն է, 'ես ղարուլ իմ:

ԱՂԱԼՕ

Ա՛յ, գօրանաս... Թ՛անլինկէն լաւ է. Սօլօլակուսը  
զիփի ինկու ին՝ (Հանդարտ եւ շեշտելով:) Դանլինկա,  
Վանլինկա, Նանլինկա, Կանլինկա, Սանլինկա, Մանլին-  
կա, Ա՛րմասլինկա, Զնւրմուսլինկա ու էլի քանի գ՛ու-  
զիս՝ զիփի ինկու:

ԹԱԼԱԼ

Ինձ համա ուրախութիւն է՝ ձեր կամքը կատարիմ:

ԱՂԱԼՕ

Ա՛յ, ապրիս... Հիմի Թ՛անլինկա ջան, դուն ինձ  
ասա՛ խօ գիզիս, վուր վից վուրթի ունիմ. նրանցը  
տիրութիւն կ'օնիս, թէ չէ:

ԹԱԼԱԼ

Վունցօր իմ յատուկ վուրթկերանցը:

ԱՂԱԼՕ

Ա՛յ, մայրիս ու գօրանաս... (Մտտուցանելով Թա-  
լալին խնձորի մի կտոր:) 'Ես էլ, Թ՛անլինկա ջան, քու  
սրտի ուղածը զիփի կու կատարիմ. մէ՛ մազ շիմ անց  
կացնի, քու արիւր... (Թալալը տեղից բարձրանալով,  
համբուրում է նրա կուրծքը:) Վա՛, վա՛, վա՛, ի՛նչ ախ-  
շիկ իս էլի. 'ես քու խիւքին ու խասիաթին մեռնիմ,  
Թ՛անլինկա ջան... (Համբուրում է Թալալին:) Ղուրթ վուր  
լաւն իս էլի... Բրիլիանտ... Քանի էտէնց քէփա բաց  
կ'օնիս, 'ես քիզ Բրիլիանտօվնա կու կանչիմ... (Թա-  
լալը գուլի է տալիս:) Մ'է խօսկով նուղի ու շաքար իս  
ինձ համա... (Սազանդարներին:) Արա՛... (Սազանդարնե-  
րը ածում, երգում են՝ «Բայաթ-Շիրազի» իր թափշուրմով,  
շատ կարճ ժամանակ. իսկ ինքը շարունակում է Թալալի  
նետ դեռ լուրջ, յետոյ սիրահարական խօսակցութիւն եւ

վերջը ձեռները համբուրում: Միւսները, ծախ կողմը նըս-  
տած, ուտում, խմում, խօսում են իրանց մէջ եւ երգը  
վերջանալուց յետոյ ծափահարում են սազանդարներին:)  
Էշխով ին ասում, չէ՛:

ԹԱԼԱԼ

Հրամանք իս:

ԱՂԱԼՕ

Իմացայ՝ դուն էլ լաւ խաղ ասիլ իս գիզացի...  
Արա՛, իմ խաթիւր, մէ՛ բան ասա, թէ կանաս... (Թա-  
լալը կոտորովում է:) Էստի ետդ օշով չկայ. քու հէքն  
ու մէքն ին ու էս մօղիկ բարեկամիւրը... Ա՛սա, մաս,  
գէթաղիւ. թէ իմ խաթիւրն ունիս ու ինձ պիտի սի-  
րիս, մաս:

ՄԱԹՕ, վեր կենալով:

Հնա՛, ինչ է, վուր ասիս: Մէ էս պատուական նո-  
րափեսի քէփը կատարէ. թո՛ղ էս գլխէն իմանայ՝ ինչ-  
դադա խաթիւր ու պատիւ ունիս իրանը:  
Թալալը հայեացքով եւ շարժուացքով հարցնում է  
մօրը:

ԷԼԻՍԱԲԷԴ, նստած:

Ա՛սա, վուրթի, մաս. Սայաթ-Նօվի խաղիւր խօ  
շատ գիզիս:

Մաթօն կրկին նստում է:

ԹԱԼԱԼ, վեր կենալով տեղից, սազանդարներին պատուի-  
րում է երգը:

«Ինձ սիրեցիր»... (Սազի ներդաշնակցութեամբ եւ  
Աղալօին շողորթութեամբ հիանալի երգում է Սայաթ-Նօվայի  
հետեւեալ դադալին:)

«Ինձ սիրէցիր, էշխըն նընգար,  
 խաղի դավթար իմ քիզ ամա. \*)  
 Մի քաղի փըշի ծաղիկըն՝  
 վարթ սուսամբար իմ քիզ ամա.  
 2'իմ թօղնի արէգագումըն՝  
 բախշի շաջար\*\*) իմ քիզ ամա.  
 Ես քու մահըն վճենց կու խընդըրիմ՝  
 նուղի ու շաքար իմ քիզ ամա:»  
 ԱՂԱԼՕ, հիացած, առանձին եւ ցածր:  
 Վն...

ԹԱԼԱԼ, շարունակում է:  
 «Է՛լ քու բաղին մըտիկ արն,  
 ուրիշ բաղէն վարթ չ'ին տա քիզ.  
 Աղ ու հացն մի դէն գըցի,  
 շափթէնը մէկ մըտիկ տնւ միզ.»  
 ԱՂԱԼՕ, առանձին, ցածր:

Ա՛մեն օր, ա՛մեն սահաթ:  
 ԹԱԼԱԼ, շարունակում է:  
 «Թէգուզ աշխարըս պըտուտ գաս՝  
 չ'իս աէսնի ինձի պէս ազիզ.  
 Թաք ուրիշ գօզալ չը սիրիս՝  
 իղըարով հար իմ քիզ ամա:»

\*) Ուղղագրութիւնը պահպանվում է համաձայն հանգուցեալ Գէորգ Ախվերդեանի հրատարակութեան:

\*\*) Այն հրատարակութեան մէջ սխալմամբ տպած է՝ սաջար, փոխանակ՝ շաջար, որ Արաբերէն (جاش) նշանակում է՝ ծառ, թուփ. այն ինչ սաջար Արաբերէն (جاش) կը նշանակէ՝ արեան կարմիր գոյն աչքերի սպիտակոցում:

ԱՂԱԼՕ, առանձին, կոկորդային ձայնարկութեամբ եւ ցածր:  
 Ը՛հ...

ԹԱԼԱԼ, շարունակում է:  
 «Աստուած վըկայ, դիմիշ արած  
 գըլուխըս քիզ մատաղ ըլի.  
 Ե՛կ քիզ իզ սիրով դամ անիմ,  
 Օ՛վ գ'ուզէ բէդամաղ ըլի.»  
 ԱՂԱԼՕ, առանձին, ցածր:  
 ձիւրի մէ շէնի, աղունակ:  
 ԹԱԼԱԼ, շարունակում է:  
 «Ես քու խօսիէն չ'իմ անց կենա,  
 Թաք քու դամաղըն շաղ ըլի.  
 Թէգուզ անմահութիւն ուզիս՝  
 սիրով կու ճարիմ քիզ ամա:» \*)  
 Ամենքը ծափահարում են, Թալալը ողջունում է:

\*) Բաց են թողած՝ երրորդ և վերջին տնեը, որոնք հետեւեալներն են՝

«Թաք ես մօրէս չ'էի ծընի.  
 վայ էն օրին՝ ես քիզ տէհայ.  
 Դու բուլբուլ իս, ես կարմիր վարթ.  
 չ'ասիս, թէ՛ վարթըն ջալզ կ'էհայ.  
 Մէ փուքըր էտէնց դիմացի,  
 շուտով չընդըստան մի էհա.  
 Անգօրձիլ, անխարջ ու քըրիհ՝  
 մանդիլի դար իմ քիզ ամա:  
 Քու դարդըն ինձի պառվէցուց.  
 ո՛ւմըն ասիմ, Սայեաթ-Նօվա.  
 Մի գըցի ձէռնէմէն ձէռըն՝  
 օսկէ թաս իմ, Սայեաթ-Նօվա.

ԱՂԱՂՕ, վեր թռչելով:

Օհ, քու ձենին ու հորուն մեռնիմ, Թալինկա ջան:  
Կրկին համբուրում է Թալալին, սաղը դադարում է:

ՄԱԹՕ, վեր կենալով:

Ապրիս, վուրթի, ինձ պարզ էրես դուս բերիլ  
քու տէր ու ախրականի մող:

ԱՂԱՂՕ, բռնելով Թալալի ձեռը:

Արի, արի, նստի էլի ինձ մող... (հստում են իրանց  
տեղերը:) Այ, ափէրճում... (Մածօրին:) Զնորակալ իմ  
քիմէն, Մաթօ. մէ խմէ սրա կինացն, է:

ՄԱԹՕ, բաժակը վերցնելով:

Էրկուսը դարդըկիլ իմ, էս էլ վրայ երիբը... Չիր  
կինացը... Էրկուսիտ կինացը մէտի իմ խմում, էսգուր  
վուր էրկուսդ հիմի մէկ իք... «Ձոր Աստուած  
գոռգեաց, մարդ մի մեկնեացե», \*) ստում է...  
Կինօք ըլիք, ծլիք, ծագկիք, մէ բարցի ծիրանար,  
ըմբրո՞վ կշտանար, մէկ մէկէմէն չբէգրեք ու չէթվիք  
ձիր օրումը... Դուշմանի սրտով չըլիք, ինդանք ու  
խիթարվիք, անիք ու բանգմանար, առչնիկը տղայ  
ըլի՝ սխրուն, քօջօբաուր...

Նշանուածները գրուի են տալիս. սահանդարները  
ածում են տուշ աւելի մեծ շգով ու հանդիսով:

Փռանգըստանու միշէն էլած՝

զար տուրաս իմ, Սայեաթ-նօվա.

ծալէ գալթարըդ, դուլթին գի.

ուանգ ու ըուբար իմ քիզ ամա:»

1754 Ապրիլի 1:

ՄԱՅԵԱԹ-ՆՕՂԱ

\*) Մատթէոս. գլ. ԺԹ. տ. 6:

ՄԻՒՍՆԵՐԸ

Ա՛մին, անին, Տէր Աստուծ:

Նշանուածները կրկին գրուի են տալիս:

ՄԱԹՕ, շարունակելով:

Նո էլ ձիր մէշը վլըվամ... (տմում է, տուշը դա-  
դարում է:) Վոխակ, էս էլ գնաց իր ճամփին... (Գա-  
տարկ բաժակը վայր դնելով:) Աբա, հիմի ծանփ տվէք,  
պիտի լէգգէվար խաղամ... (Սահանդարներին:) Չիր շա-  
քը տանիմ, մէ լաւ լէգգէվար... (Սահանդարները ածում  
են լէգգերէն պարի եղանակը:) Է՛տէնց... (Մի փոքր պա-  
րում է:) Զարաշ... Աբա, նորափեսայ ու նորահարս,  
հիմի ձիր հիրթն է.

ԱՂԱՂՕ

Ի՞նչ է. հէնց գիլիս շիմ կանան... (Պարում է. յե-  
տոյ գրուի է տալիս Թալալին, որ ոտի է կանգնում:) Աբա,  
Թալինկա ջան, մէ քու շնուքը էստումն էլ շանց տու...  
(Միւսներին:) Դէ, ծանփ տվէք... (Թալալը եւ Աղալօն  
պարում են միասին:) Հա, դժաւ...  
Շարունակում է պարել Թալալի հետ միասին: Աջա-  
կողմեան լուսամուտում երևում են՝ կատարինէն  
դաժիբայով եւ Սանվէլը գլխարկով, որոնք այն-  
տեղից մի վայրկեան նայում են պարին: Ծառա-  
ները աջ դռնից բերում են դարձեալ արծաթա-  
փայլ սկուտեղներով՝ Թէյ, պաքսիմատներ եւ  
զանազան շաքարեղէն: Գիմացի դուան կողմից  
լավում է կատարինէի ձայնը՝ Թոնգէք, Թոնգէք:  
Ծառաները զարմացած տեղն ու տեղը կանգ են  
առնում:

**Տ Ե Ս Ի Լ Ք Ա**

ՆՐԱՆՔ, ԿԱՏԱՐԻՆԷ, ՍԱՆՎԷԼ

ԿԱՏԱՐԻՆԷ, դաժիբայով յանկարծ մտնում է դիմացի դրո-  
նից. Սանվելը հետեւում է նրան, գլխարկը ձեռին:

Է՞տ էր բաղնիսը՝

ԹԱՂԱԼ, սչելով:

Ա՛խ...

Ընկնում է Աղալօի գիրկը, երեսը նրա կրծքի վրայ  
ձեռով ծածկելով. ամենքը շուարվում են. սաղը  
դադարում է:

ԿԱՏԱՐԻՆԷ, երկու ձեռով չանչ անելով:

Վնայ, գեղինը պատըռվի ու ձիղ դէվէր տանէ, ձիթ  
բաղնիսի բօխչէն էլ հիդը, ահըն:

Աղալօն մէկ ձեռով գրկելով Թալալին եւ միւս ձե-  
ռով բռնելով նրա թեւը, նայում է կատարինէին:

ՍԱՆՎԷԼ, որ ապշած մնացել էր բեմի խորքումը, նայում  
է Թալալին եւ առանձին:

Փո՛ւ քու նամուսին:

Ամենքը մնում են անշարժ իրանց դերերին համա-  
պատասխան դիրքով, — ծառաները սկուտեղնե-  
րը ձեռներին: ՊԱՏԿԵՐ: Վարադոյրը իջնում է  
կամաց կամաց:

Վ Ե Ր Զ

**ՍՐԲԱԳՐՈՒԹԻԻՆԵՆԵՐ ԵՒ ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ**



Երևու: Տող: Տպրուած է: Պէտք է:

1—16	հակասին	ԲՕԽԶԱՅ	ԲՕԽԶԱ
1	1	ներբելից	«
5	5	վերելից	վուրվիկէրիք
«	14	«	Վիկաց
«	15	«	հնդրվի
«	1, 2	ներբելից	հրամաէ, է, բա- տօնօ ջան
«	4, 9, 12	«	Վիկաց
«	11	«	վիկաց
6	2	վերելից	չիս իմանում, քա՛
«	«	«	վիկաց
7	9	ներբելից	վիկալայ
8	5	վերելից	տիանին
«	6	ներբելից	ձլիվ
12	1	«	տիանիմ
13	5	վերելից	լաւ
«	4	ներբելից	վիկուկենայ
14	«	«	չիմ
16	2	վերելից	քոռանամ
«	2, 3	«	Ուղում իս
23	6	ներբելից	վիկենայ
«	9	«	վրայ
27	7	«	քայ,

uz. 4/14 5

Երես:	Տող:	Տպուած է:	Պետք է:
27	9	Մուշթէիդը	Մուշթէիդը,
28	3	կրանք (մի քանի օրինակներում)	կրանք
«	2	վուրփիւներուն	վուրփիւներուն
29	«	վուրփիւրիք	վուրփիւրիք
«	8	չէ	չէ
«	9	մայիմախ, օյլ,	մայիմախ, ան մախինչ ու վազլախ, օյլ,
«	11	« վիքաշած	վի քաշած
36	5	էւէդ	էւէտ *)
41	6	ԱՂԱԼՕ, ոտի կանգներով	ԱՂԱԼՕ, ոտի կանգներով եւ տարով ձեռք
42	8	հւմ, հւմ, հւմ, հւմ:	հւմ, հւմ, հւմ, հւմ...
43	10	դոնից	դոնից
«	5	ԱՂԱԼՕ, նայելով Թալալին	ԱՂԱԼՕ, ընդհանուր ողջին տարով, նայում է Թալալին
48	10	« համբուրում	համբուրում

\*) Ազգագրութիւնը, բարձրագոյն է Թիֆլիզի բարձր առողջանութեանը:



**ԳՍՏՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ**

**Թ Ա Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Ա Ծ Ն Ե Ր Ը**

	<b>Թ. Գ.</b>
ԳԻՇԻՐՎԱՆ ՍԱՔՐԸ ԽԷՐ Է, կասակ մէկ արարուածով. երկրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	— 30
ԽԱԹԱՔԱՆՈՒՄ, կասակեղբորիւն չորս արարուածով. երկրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	— 50
ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ, կասակ մէկ արարուածով. երկրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	— 20
ԵՒՅԼՆ ԿԱՄ ՆՈՐ ԳԻՈԳԻՆԷՍ, կասակ երկու արարուածով. . . . .	— 40
ԷԼԻ ՄԷԿ ՋՈՂ, կասակեղբորիւն ճիւղ արարուածով. երկրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	1 —
ՊԷՊՕ, կասակեղբորիւն երեք արարուածով. երրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	— 50
ՔԱՆԴԱԾ ՕՁԱԽ, կասակեղբորիւն երեք արարուածով. երկրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	— 50
ԱՄՈՒՍԻՆՆԵՐ, կասակեղբորիւն չորս արարուածով. երրորդ սպագրութիւն, ուղղած . . . . .	1 —
ԲԱՂՆԸՍԻ ԲՕԽՁԱ, կասակ երկու արարուածով . . . . .	— 40

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՅՐԱՆՍԵՐԷՆԻՑ**

ԺՕՐԺ ԳԱՆԴԷՆ, կասակեղբորիւն երեք արարուածով, ճեղիմակութիւն <i>ՄՕԼԻԷՐԻ</i> . . . . .	— 40
--	------

*Վաճառորդն էն Թիֆլիզում՝ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ, ԿՈՎԿԱՍԵԱՆ  
 և՛ „ԳՈՒՏՏԵՄՐԵՐԳ“ զրախաճառանոցնէրում, և՛ Քազաում՝  
 Տիլիմ Մ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ զրախաճառանոցում:*

« Ազգային գրադարան



NL0357840

56.263